ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական հաստատություն՝ «Հառիճի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ

Ծրագրի գործողության ժամանակաշրջան՝ 2023 – 2028 թթ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ/ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ————————————————————————————————————

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ և ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:——

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

2.1. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ————————————————————————————————————

2.2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ————————————————————————————————————

2.3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՒ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ——

2.4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ——

2.5. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ————————————————————————————————————

2.6. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ և ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ և ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ. ——

2.7. ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ————

2.8. ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ և ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ————

2.9. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՄՄԱՆ և ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ——

2.10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ և ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ——

3. ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ, ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.

3.1. Ի՞ՆՉ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ Է ԲԱՎԱՐԱՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ——————————

3.2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ, ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ——————————

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՒ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՁԵՎԵՐԸ

Նախաբան

«Հառիճի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թթ զարգացման ծրագիրը կազմվել է հիմք վերցնելով հետևյալ իրավական հիմքերը՝

- ՀՀ Սահմանադրություն
- «Երեխայի իրավունքների մասին » կոնվենցիա
- Աշխատանքային օրենսգիրք
- «Կրթության մասին » ՀՀ օրենք

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
- Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ « Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափի և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողականի ցուցանիշներն ու պահանջները հաստատելու » մասին հրաման N 35-Ն պահանջների
- Դպրոցի կանոնադրություն
- Դպրոցի ներքին իրավական ակտեր
- Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական իրավական ակտեր, որոշումներ, հրամաններ կարգեր

Տվյալ փաստաթուղթը պատրտաստվել է հաշվի առնելով ՊՈԱԿ-ի մանկավարժական աշխատակազմի ձեռք բերումները, դպրոցում առկա հիմնախնդիրները և նպատակները որոնց հասնելը կբերի կրթական պրոցեսների արդյունավետության բարձրացման:

Դպրոցի զարգացման ծրագիրը, հանդիսանում է հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ և միտված է վերջինիս արդյունավետության բարձրացմանը:

Զարգացման ծրագրի իրականացման ժամկետ

2023-2028 թվականներ:

Զարգացման ծրագրի նպատակներ

Սահմանած ժամանակահատվածում բարձրորակ և կրթական արդի տեխնոլոգիաների վրա հիմնված կրթության միջոցով հասնել , բազմակողմանի զարգացած անհատների ձևավորման , ովքեր իրենց գիտելիքները կծառայեցնեն ի շահ պետության, հասարակության և այլ անհատների բարօրության:

Զարգացման ծրագրի խնդիրները

- Սահմանված ժամանակահատվածում հաստատության զարգացման առաջնահերթությունների կանխորոշում, կրթական գործընթացների արդյունավետության բարձրացում, դասպրոցեսների որակի բարելավում:
- Կրթական հաստատության ներքին փաստաթղթերի ձևակերպումների և վերաձևակերպումներ, հիմնված կրթության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների և բարեփոխումների վրա, զետեղված զարգացման ծրագրում շարադրված առաջնահերթություններից:
- Հաստատություն նորարար, վերապատրատստված և մասնագիտական բարձր որակներ ունեցող մասնագետների ներգրավում՝ սաների շրջանում կրթական գործընթացների նկատմամբ հետաքրքրության և մոտիվացիայի բարձրացման նպատակով:
- Կրթական հաստատությունում, ստեղծագործական գործունեության համար նպատասավոր պայմանների, միջավայրի ստեղծում, փոխադարձ հարգանքի մթնոլորտի ձևավորում, համագործակցությունների խթանման և փոխվստահության ձևավորում:

- Նորարարական մոտեցմամբ կրթական ծրագրերի և ծրագրային գործողությունների փաթեթի մշակում, որը կհանգեցնի տարբեր կրթական մակարդակներում, սովորողներին կրթական չափորոշիչներին համապատասխան կրթության մատակարարում, նորացված բովանդակության, առողջ միջավայրի ստեծղծում, որը միտված կլինի սաների չափորոշիչային պահանջներին համապատասխան գիտելիքների յորացման, ինչպես նաև կնպաստի սովորոցների տրմաբանական, էմոցիոնալ և քննադատական մտածուղության ձևավորմանն ու զարգացմանը:

Զարգացման ծրագրի տեսլականը/առաքելությունը

Զարգացման ծրագրի իրականցման ժամանակահատվածում, դառնալ պետության, տնտեսության և հանրության զարգացող պահանջներին համապատասխան կրթական հաստատություն, որը կապահովի տեսական և կիրառական գիտելիքներ, ինչպես նաև սաների արագ ինտեգրացիան հասարակության մեջ, կլինի ժամանակակից, նորարարական և ինչու ոչ փորձարարական կարողություններ և գիտելիքներ ապահովող առաջատար հանրակրթական օջախներից մեկը Հանարապետությունում:

Զարգացման ծրագրի ակնկալվող արդյունքները

- Կրթական հաստատությունում սովորողների սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացում, հիմք ունենալով գործող օրենսդրութունն ու իրավական այլ կարգավորումները:
- Բարձրորակն կրթության մատչելիության ապահովում
- Կրթական հաստատությունում սովորողների և աշխատակազմի համար ստեղծագործական միջավայրի ապահովում, ստեղծարար մտքի զարգացամանն ուղղված միջավայրի ստեծղում՝ կրթական գործընթացներում նորարա մեթոդների կիրառամամբ:

Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

- Պետական բյուջե
- Արտաբյուջետային միջոցներ
- Տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից դրամաշնորհներ
- Բարերարներ և բարեգործական կազմակերպություններ
- Ֆոնդահայթայայթման գործիքներ

Զարգացման ծրագրի իրականացնողներ

Կրթական հաստատության համակազմ, ներառյալ շահառուներ

Զարգացման ծրագրի վերահսկողությունը

Կրթական հաստատության համար նախատեսված զարգացման ծրագրի իրականացման գործընթացը վերահսկվելու է ըստ ծրագրի սահմանված միջոցառումների միջոցով, որոնք ժամանակ ա ժամանակ կարող են փոփոխվել և հարստացվել պայմանավորված օրենսդրական ակտերի փոփոխություններով, ժամանակակից համակարգերի ներդրմամբ և պահանջներով: Վերահսկողություն իրականցվելու է մշտադիտարկամն միջոցով հաստատության արտաքին և ներքին արդյունավետության գնահատում կատարելու նպատակով: Զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնելու է այն

վավերացրած կառավարման խորհուրդը համաձայն Հանրապետությունում հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության և իրավական այլ ակտերի, դրույթների և նորմատիվների:

Զարգացման ծրագրի հեղինակ՝ Նարինե Գրիշայի Մինասյան

Դպրոցի համառոտ տեղեկանք

«Հառիճի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում/ գրանցման համար՝ 53. 210.00418/

Հասցե՝ Շիրակի մարզ, Արթիկ միավորված համայնք, Հառիճ բնակավայր՝

Հեռ.(0244) 55205

Ներածություն

Դպրոցի զարգացման ծրագիրը դա հաստատության հիմնարար փաստաթուղթն է, որի վրա հիմնվում է է կրթական հաստատության առաջիկա հինգ տարիների կրթադաստիարակչական գործունեությունը: Սույն փաստաթուղթը պարունակում է առաջիկա 5 տարիների գործողությունների և քայլերի ռազմավարությունը, ներառյալ այն նպատակներն ու խնդիրները, որոնք նպատակադրվում են հատսատության զարգացման հիմնական ուղղությունները և դրանց իրականացման գործընթացում հնարավոր ռիսկերը: ՀՀ Շիրակի մարզի «Հառիճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) 2023-2028թթ. զարգացման ծրագիրը մշակվել է համապարփակ, բազմակողմանի և համեմատական վերլուծության արդյունքում,հիմք

ունենալով նախորդող մի քանի տարիները, փաստաթղթի հիմքում է նաև կրթության ոլորտում ընթացիկ իրականացվող փոփոխությունները:

Մշակված ծրագրի արդյունքում սահմանված նպատակներն ու խնդիրները ձևակերպվել են՝ հիմնվելով հանրակրթության ոլորտում սահմանված պետական չափորոշչի ձևավորման հիմնական երկու բաղադրիչների վրա՝

- Ուսումնական բնագավառների և կրթության բովանդակության բաղադրիչները,
- Շրջանավարտին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները:

Ծրագիրը մշակման գործընթացը ներառել է հետազոտական հատված, որչի ընթացքում ունենցել ենք խորքային հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ ծնողների, մանկավարժական և վարչական աշխատակիցների, ինչպես նաև աշակերների հետ: Մշտադիտարկումն է իրականցնվել դպրոցի գործընկեր կառույցների, շրջանավարտների հետ կապերը, վերջիններիս կարծիքը և հաշվի է առնվել զարգացման փաստաթղթի մշակման գործընթացում:

1. Ուսումնական հաստատության գործունեությունը

Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները

Ուսումնական հաստատությունը կառուցվել է 1994 թվականին, տիպային շենք `1 մասնաշենքային կառուցվածքով՝ նախատեսված 195 աշակերտի համար

: Ուսումնական հաստատությունը ունի.

- 12 դասասենյակ, ընդհանուր մակերերսը 300 քմ
- 3 վարչական աշխատասենյակ, ընդհանուր մակերեսը՝ 15 քմ ,
- 1 ուսուցչանոց, ընդհանուր մակերեսը՝ 30 քմ ,
- 1 լաբորատորիա, ընդհանուր մակերեսը՝ 40 քմ
- Կահավորված սանհանգույցներ, ընդհանուր մակերեսը՝ 16 քմ
- 1 մարզադահլիճ, ընդհանուր մակերեսը՝ 128 քմ,
- 1 ճաշարան, ընդհանուր մակերեսը՝ 20 քմ
- 2 Հանդերձարան, ընդհանուր մակերեսը՝ 40 քմ
- 1 շախմատի դասարան , ընդհանուր մակերեսը՝ 29 քմ ,
- 1 համակարգչային, ընդհանուր մակերեսը՝ 57քմ ,
- 1 հաշվապահություն, ընդհանուր մակերեսը՝ -1քմ ,
- 1 լաբորատորիա, ընդհանուր մակերեսը՝ 25քմ ,

- 1 գրադարան, ընդհանուր մակերեսը՝ 18 քմ
- 1 ՆԶՊ դասասենյակ, ընդհանուր մակերեսը՝ 24քմ
- 1 պահոց, ընդհանուր մակերեսը՝ 15քմ
- 1 արհեստանոց, ընդհանուր մակերեսը՝ 30 քմ

Կրթական հաստատությունն ունի անվտանգ, կանաչապատ բակ, բացօդյա մարզադաշտ: Արտակարգ իրավիճակների համար նախատեսված ելքերը համապատասխան կահավորված են, աշակերտների անխոչընդոտ տարհանման համար:
Ուսումնական հաստատությունը ունի ջեռուցման անհատական համակարգ, ոչ մշտական ջրամատակարարում, արագ ինտերնետ կապ ինչպես նաև անխափան հոսանք:
Ըստ 2023-2024 ուսումնական տարվա տվյալների ուսումնական հաստատությունում ուսանում են շուրջ 133 աշակերտ: « Հառիճի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը գործում է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ միավորված համայնքի Հառիճ բնակավայրում , 6փողոց, շենք 7 հասցեում:

Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան

«Հառիճի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը տվյալ պահի դրությամբ ոչ լիարժեք է հագեցված կրթական ծրագրերը ամբողջությամբ և ըստ պահանջների իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով: Ուսումնական հաստատությունում առարկայական դասասենյակները թերի կահավորված են և ունեն մեթոդական, թեմատիկ և դիտակտիկ նյութերի, տեխնիկայի /մանրադիտակներ/ քարտեզների, ատլասների պակաս: Ուսումնական հաստատությունում առկա է 4 համակարգիչ, 1 պրոյեկտոր, 2 բազմաֆունկցիոնալ սարք: Նշվածներից զատ հաստատությունում գործում է Արմաթ ինժեներական լաբորատորիա, դասասենյակը հագեցած է 7 համակարգիչներով՝ 5 մինի այգեստան, երկու համակարգիչ, 3Դ մոդելավորող հաստացով և փայտի տպագրական հաստոցով, լաբում առկա է մեկ ռոբոտի հավաքածու:

Ուսումնական հաստատությանը նյութատեխնիկական բազայի համալրման առաջնային կարիքներն են.

- Դյուրակիր համակարգիչներ. ՏՀՏ չափորոշիչներին համապատասխան կրթություն ապահովելու և մեծաքանակ աշակերտների ՏՏ գիտելիքների բարձրացման համար,

- Էլեկտրոնային գրատախտակ, Դասապրոցեսները նորարարական մոտեցմամբ կազմակերպելու համար
- Հակահրդեհային ահազանգման համակարգ, ուսումնական հաստատությունում արտակարգ իրավիճակներում անվտանգության մակարդակի բարձրացման համար,
- Ջերմոցային տնտեսություն, դուալ կրթության միջավայրի ստեղծման համար ,
- Մարզագույքի հավելում՝ առող ապրելակերպի խթանման համար, ֆիզկուլտուրա առարկայի դասերը առավել գործնական կազմակերպելու համար
- Գրադարանի ֆոնդի թարմացում ընդհուպ մինչև էլեկտրոնային գրքերով թարմացում
- Աստղադիտակ և մանրադիտակներ. Լաբորատոր փորձերի և ինտեգրված դասապրոցեսների համար նախատեսված:

Ուսումնական հաստատության մարդկային ռեսուրսները

Ուսումնական հաստատության շարժիչ ուժը ուսուցիչն է:

«Հառիճի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատակազմը բաղկացած է 34 աշխատակցից, որոնցից վարչական աշխատողներ՝ 5-ը, ուսուցիչներ՝ 14-ը, սպասարկող անձնակազմ՝ 7, ուսունմաօժանդակ անձնակազմ՝ 8-ը:

Մանկավարժների որակավորումը	Մանկավարժների թիվը
Մանկավարժների ընդհանուր թիվը	24
Ուսուցիչների ընդհանուր թիվը	14
Բարձրագույն կրթությամբ և ատեստավորված ուսուցիչներ	22
Պարտադիր ատեստավորված ուսուցիչներ	21
Միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչներ	2
Տարակարգ ունեցող ուսուցիչներ	2

Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ	2
Կամավոր ատեստավորման դիմած ուսուցիչներ	4
Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ	4
Մենթոր ուսուցիչներ	0

Հաստիքացուցակ

Հ/Հ	Հաստիքների անվանում	Հաստիքների միավորների քանակ
1	Տնօրեն	1
2	Վարչատնտեսական համակարգող	1
3	Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքներկ գծով	0,5
4	Տնօրենի տեղակալ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով	0,75
5	Վարչատնտեսական համակարգող	1
6	Հաշվապահ	0,75
7	Զինղեկ	1
8	Քաղպաշտպանություն	0,5
9	Համակարգչային օպերատոր	0,75
10	Գրադարանավար	1
11	Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	0,5
12	ՈՒսուցչի օգնական	1
13	Լաբորանտ	0,5
14	Տնտեսվար	0,75

15	Հավաքարար	1,5
16	Պահակ	1
17	Հնողապահ	0,5

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻ ԿԱԶՄ	
Մինչև 30 տարեկան	1
31-40 տարեկան	6
41-50 տարեկան	6
51-60 տարեկան	3
61 և ավելին	6

Ուսումնական հաստատությունում բարենպաստ միջավայրի ստեղծումը գրավական է ուսուցչական անձնակազմի ինքնակրթության խթանման , մասնագիտական զարգացման և կրթական գործընթացներում ինովացիաների ներդրման և կիրառման համար համար։

Ուսուցիչները մասնակցում են նախագծային բազմաթիվ նախաձեռնությունների, տարբեր կրթական ծրագրերի և ունեն նախաձեռնողականության բարձր ցուցանիշներ։ Ուսումնական հաստատությունում սովորում են 133 աշակերտ։

ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի հիման վրա տրված լիցենզիաների համաձայն դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝

- Տարրական ընդհանուր կրթություն I աստիճան՝ - լիցենզիա Ա N 0539/52 տեղ/
- Հիմնական ընդհանուր կրթություն II աստիճան՝ - լիցենզիա Ա N 0528/73տեղ/
- Միջնակարգ ընդհանուր կրթություն I II աստիճան - լիցենզիա Ա N 0431/45տեղ/
- Տնային ուսուցում - լիցենզիա Ա N 0431

Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

Ուսումնական հաստատության զարգացման կարևորագույն բաղադրիչը կառավարման գործընթացի ճիշտ կազմակերպումն է և իրականցման գործընթացի մշտադիտարկումը։

Հաստատության շահառու կողմերի միմյանց փոխլրացնող, օպտիմալ, թափանցիկ, մասնակցային հարաբերություններն ու փոխհամագործակցությունը կհանգեցնեի հաստատության կառավարման արդյունավետության և որակի բարձրացմանը:

Ուսումնական հաստատության ընտրված կառավարման և խորհրդակցական մարմինները գործում են համաձայն օրենսդրության, և իրենց պարտականություններն ու լիազորությունները համաձայնեցնում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված իրավասությունների շրջանակներում:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 29-րդ կետի, ուսումնական հաստատության կառավարումը իրականցնում է հիմնադիրը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը իրեն վերապահված իրավասությունները ստանձնում է նշանակումից հետո, վերջինիս նշանակումը և պաշտոնից հեռացումը իրականցվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Հառիճի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ըստ ՀՀ կառավարության 202թ ապրիլի 23-ի N 444 որոշման, իրականացնում է կոլեգիալ կառավարում:

Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության Խորհուրդն, որը կազմված է Մեղրաշեն, Նահապետավան և Հառիճ բնակավայրերից: Խորհրդի անդամների գործառույթները ներառում են.

01. ուսումնական հաստատության գործադիր մարմնի գործունեության ընթացիկ և պարբերական վերահսկողության իրականացում,
02. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականցման վերահսկողություն ընթացիկ մշտադիտարկում
03. Ուսումնական հաստատությունում սաների և աշխատկիցների համար ներքին կարգապահական կանոնակարգի մշակում՝ կանոնների հաստատում,
04. Հաստատության տարեկան ծախսերի նախահաշվի, հաջորդ տարվա բյուջետային հայտի, հաստիքացուցակի, տարիֆիկացիայի ցուցակների, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների հաշվետվությունների դիտարկում և քննարկում,
05. Ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության քննարկում:

06. Ուսումնական հաստատության կրթադաստիրակչական գործունեության վերաբերյալ կազմված հաշվետվության քննարկում։
07. Կրթական հաստատությունում գործունեություն ծավալող և շահառու հանդիսացող մյուս խորհուրդների հետ իրար փոխլրացնող համագործակցության ապահովում

Ըստ մշակված զարգացման ծրագրի 2023-2028 թվականներին Ուսումնական հաստատության և խորհրդի միջև համագործակցությունը կազմակերպվելու է «Հանրակրթության մասին» ՀՀ նոր օրենքի համաձայն։

Հաշվի առնելով հանգամանքը, որ ձևավորած խորհուրդը գործում է Ուսումնական հաստատության առաջընթացի ապահովման համար և շահագրգռված է արդյունավետ ժամանակահատվածում տեսանելի արդյունքներ ունենալու հարցում վերջինս պատրաստակամորեն աջակցում է հաստատության կողմից նախաձեռնած բոլոր միջոցառումներին։

Ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը սահմանված է առավելագույն հստակ, և գործունեությունն իրականցվում է հանրության բոլոր շրջանակների համար թափանցիկ։

Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունը համաձայն Հանրապետությունում առկա օրենսդրական պահանջների տեղադրվում են դպրոցի կայքում։

Ուսումնական հաստատությունում կառավարման խորհրդից զատ գործում են նաև մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդները որոնք ունեն խորհրդակացկական մարմնի կարգավիճակ նշվածների զատ կա նաև առարկայական մեթոդմիավորումներ վերջիններս ունեն սահմանված լիազորությունների և պարտականությունների շրջանակ ։

Համաձայն կանոնակարգի հաստատության մանկավարժական խորհուրդը ձևավորվում է օգոստոսյան առաջին նիստում։ Խորհրդի անդամ են հանդիսանում Ուսումնական հաստատությունում գործունեություն ծավալող բոլոր մանկավարժները։

Ուսումնադաստիրակչական գործընթացի սահուն և արդյունավետ կազմակերպման համար անգնահատելի կարևորություն ունի ծնողական խոհրդի աջակցությունն և մասնկացայնությունը։ Ուսումնական հաստատությունում գործընթացների թափանցիկության համար կարևորագույն գործիքակազմի տարերից է ծնողի

ներգրավածությունը գործընթացներում, հարկ կա նշելու որ մանկավարժի մտերիմ գործընկերը հենց ծնողն է: Կարևորելով գործընկերային հարաբերությունը, դպրոցի անձնակազմը՝ տնօրինությունից մինչև ուսուցիչ տարատեսակ համագործակցություններ և աջակցություններ է ստանում հենց ծնողական խորհրդից, վերջիններս կուռ համագործակցում են և տնօրինության և մանկավարժների և աշակերտական խորհրդի ներկայացուցիչների հետ:

Ուսումնական հաստատությունում հատկապես վերջին ժամանակահատվածում կարևորվում է հենց աշակերտական խորհուրդի գործունեությունը, վերջինս գործում է ժողովրդավարական սկզբունքներով, յուրաքանչյուր աշակերտ կարող է հանդես գալ աշակերտական խորհրդում և վերջինիս ձայնը լսելի է կառավարման բոլոր օղակներում: Աշակերտական խորհորդը մշտապես հանդես է գալիս տարաբնույթ առաջարկություններով, ուժերի ներածին չափով նախաձեռնում և մանկավարժների հետ միասին կազմակերպում տարատեսակ միջոցառումներ ձեռնամուխ լինելով հաստատությունում աշակերտների կրթության համատեղմանը ժամանցի հետ:

Ուսումնական հաստատությունում կազմավորվել են առարկայական 3 մեթոդմիավորումներ

- Հայոց լեզու և հայ գրականություն, հասարակագիտական առարկանների և օտար լեզուների մեթոդմիավորում
- Տարրական կրթության մեթոդմիավորում
- Բնագիտամաթեմատիկական առարկանների մեթոդմիավորում

Մեթոդմիավորումների նիստերը Ուսումնական հաստատությունում գումարվում են պարբերական՝ ըստ կարգի, նիստը արձանագրվում է և արդյունքերը արխիվացվում են: Կարևորելով վերջիններիս գործունեության արդյունավետությունը նպատակային է ցուցաբերել հետևողական մոտեցում, ժամանակ առ ժամանակ հաստատությունում իրականցնել տարատեսակ կլոր սեղան քննարկումներ որոնք նպատակուղղված կլինեն հաստատությունում մեթոդական միավորման աշխատանքների պլանավորման և կազմակերպման արդյունավետության բարձրացմանը և նորացված տեղեկատվության փոխանցմանը: Ուսումնադաստիրակչական գործընթացների արդյունավետ կազմակերպման համար, հարկավոր է սահմանել բարձր ուղենիշներ և վերջինին հասնելու համար համակարգել կառավարման գործընթացները, քանի որ ժամանակի

մարտահարվերներին դիմակայելու ունեցող սերունդ կրթելը հաստատության կարևորագույն առաքելությունն է:

2. Ուսումնական հաստատության իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր

2.1. Դպրոցի շենքային պայմանները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի շենքը մեկ հարկանի տիպային շենք է՝ կազմված 1 մասնաշենքերից: Դպրոցը հիմանորոգվել է պետական միջոցներով: Ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով (շենքին կից գտնվում է կաթսայատունը), տարհանման ելքերով: Ունի մարզադահլիճ՝ ապահովված հանդերձարաններով, սանհանգույցներով, գրադարանով: Դպրոցը կրթական գործունեության ապահովման համար ունի 12 լուսավոր դասասենյակ, վարչական 3 սենյակ, ուսուցչանոց, համակարգչային սենյակ, գրադարան ընթերցասրահով, ՆԶՊ-ի կաբինետ, զենքի համար հարմարեցված պահոց, Դպրոցն ունի ճաշարան և խոհանոց թարացված գույքով, առկա է սառնարան և գազօջախ ունենք նաև օդափոխիչ: Մեկ խոհանոց՝ նախատեսված ուսուցիչների	Առկա է շուրջօրյա ջրամատակարարմամն հիմնախնիր, վերջինիս պատճառով սանհանգույցները երբեմն չեն շահագործվում: Հաստատությունը չունի հանդիսություններկ դահլիճ, որը հնարավորություն կտա բարձրացնել սաների մշակութային կյանքի ակտիվությունը: Հաստատությունում թերի/մասնակի է շահագործվում սանհանագույցները, սանիտարական վիճակը գնահատվում է բավարար: Ուսուցչանոցը լայնարձակ է բայց թերի կահավորված և անհարմար հանգստանալու համար: ՆԶՊ կաբինետը թերի կահավորված , հնարավորություն չի տալիս առավել գործնական դասապրոցես կազմակերպել: Մաքրուհիների համար նախատեսված պահոց սենյակներ առկա չեն, վերջիններս

համար։ Ուսումնական հաստատությունն ունի նկուղային հարկ, էլեկտրական վահանակի սենյակ, տեխնիկական նշանակության սենյակներ ,4 սանհանգույց։ Ուսումնական հաստատությանը կից գտնվում է մարզադաշտը։ Շինության տանիքը փոխված է, պատուհանները թարմացված։ Դասասենյակներից որոշները կոսմետիկ հարդրված են։ Շենքային պայմանները համապատասխանում են անվտանգ շահագործման չափանիշներին։	մշտապես միջանցքում են լինում, Հաստատությունում չկա պահակակետ, գիշերային պահակի համար հանդերձարանն է հարամաեցված չկա, Առկա ըէ հաշվապահի առանձնասենյակ։ Դպրոցի բակն ունի ասֆալտապատման կարիք Դպրոցի տարածքն ամբողջությամբ ունի կանաչապատման կարիք։ Դպրոցի մարզադաշտի պատրասում և կանաչապատում Կա տեսախցիկների տեղադրման կարիք։ Դպրոցի մուտքի մոտ անհաժեշտ է թեքահարթակ՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող աշակերտների համար Կահավորված ապաստարանի բացակայություն արտակարգ իրավիճակների համար նախատեսված։

2.2.Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Հաստատությունն ունի 4 համակարգիչ, 1 պրոյեկտոր, 2 բազմաֆունկցիոնալ սարք։ Դպրոցում գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, վերջինս հագեցած է 2 համակարգչներով 5 մինի այգեստաններով , 3Դ մոդելավորման տպագարական հաստոցով, փայտի	Համակարգչային սենյակը ունի նոր համակարգչային տեխնիկայով հագեցնելու կարիք Դասասենյակներում առկա չէ համացանցի հասանելիություն։ Դասապրեցի ինտերակտիվության ապահովման համար դասասենյակներում

փորագրման հաստոցով, առկա է Ռոբոտի հավաքածու, WI-FI մեկ սարք , սեղաններ և աթոռներ, 4 գրապահարան, 2 աշխատասեղան, 2 չհրկիզվող պահարան։ Դպրոցում գործում է գրադարան, առկա է բոլոր աշակերտների համար նախատեսված դասագրքեր և գեղարվեստակիան գրքեր։ Հաստատությունում առկա է նաև առարկայական նյութեր գործնական դասապրոցեսների կազմակիերպման համար։	անհրաժեշտ է դյուրակիր համակարգիչներ (նոթբուկեր) պրեոկտորներ և առնվազն մեկ էլեկտրոնային գրատախտակ։ Գրադարան – ընթերցասրահը կարիք ունի համակարգիչների, ինչպես նաև աուդիո գրքերի։ Գրադարանի բազայի թարմացման համար էլեկտրոնային հաշվառման,նոր էլ-գրքերի ներդրման անհարժեշտություն կա։ Հարկավոր է թարմացնել դիդակտիկ նյութերի բազաները, ձեռք բերել նոր սարքավորումներ՝ մանրադիտակներ, հեռադիտակներ ինչու ոչ աստղադիտակ Լաբարատոր պայմանների ապահովման, քիմիական որոշ տարերի թարմացման, գործնական դասապրոցեսի կազմակերպման համար։ Մարզագույքի՝ տարատեսակ մարզասարքերի, մարզական գորգերի բացակայություն։ Ուսումնական հաստատությունում նորացված գույքի՝ աշակետրական և ուսուցչական սեղանների և աթոռների ձեռք բերման անհրաժեշտություն։

2.3. Հաստատության կառավարման մարմնի եւ տնօրենի համագործակցության վերլուծությունը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի կառավարման խորհուրդը (այսուհետ խորհուրդ) գործում է սահմանված կարգով՝ իր լիազորված և վերապահված գործառույթներին համապատասխան: Խորհուրդը դպրոցի կառավարման գործընթացի անմիջական մասնակիցներից է համարվում, սահմանված կարգով կազմակերպում է խորհրդի նիստեր, որոնց ժամանակ քննարկվում են առաջնահերթ օրակարգային հարցեր: Դպրոցի խորհրդի անդամները առաջադրվել են և ընտրվել ՄԽի, ԾԽ-Ի, ՏԻՄ ղեկավարի ինչպես նար լիազոր մարմնի կողմից: Խորհուրդը բաղկացած է երեք համայնքների ներկայացուցիչներից, խորհրդում ներառված են՝ Մեղրաշեն, Նահապետավան և Հառիճ բնակավայրերի ներկայացուցիչները: Հարգի է նշել, որ ձևավորված խորհրդի անդամների մեծամասնությունը անկախ են արտահայտվում, կամազատություն են դրսևորումներում և քաջ գիտակցում են անկախ կարծիք արտահայտելու և ազատության ցուցիչները: Խորհուրդը ունի մշտադիդարկում իրականցնելու ֆունկցիա, իրականցնում է ուսումնական հաստատության զարագցման պլանին համապատասխան գործունեության ապահովման վերահսկողությունը: Խորհուրդն աջակցում է և լիարժեք մասնակիցն է դառնում Ուսումնական	Խորհդրի որոշ անդամներ ներգրված չլինելով հանրակրության ոլորտի մեջ լիարժեք չի տիրապետում ներքին խնդիրներին հետևաբար գործընթացում երբեմն առաջ են գալիս անհամաձայնություններ: Տնօրենի ընտրության ապա նշանակման գործընթացների ձգձգումը ինչպես նաև նշված կարգի փոփոխությունը շատ հաճախ նպաստում է խորհրդի ակտիվության նվազեցմանը, որոշումների կայացման մեջ վերջիններիս ցածր ներգրավածությանը: Խորհրդի չվճարվող աշխատանքի բնույթը հանգեցնում է ցածր մոտիվացիայի, անդամները ժամանակ առ ժամանակ չեն ցուցաբերում նախաձեռնողականություն կամ քիչ են ներգրավում որոշումներ կայացման գործընթացներում: Ժամանակ առ ժամանակ բացակայում են խորհդի նիստերից: Խորհդրի որոշ անդամներ չեն տիրապետում իրենց իրավունքներին ու պարտականություններին Խորհրդի անդամները չեն տիրապետում Հանրապետությունում գործող և օրենքի ուժ ունեցող ներմատիվներին, ակտերին և անգամ օրենքներին հետևաբար չգիտեն իրենց իրավունքները,

հաստատության կողմից սահմանված ծրագրային խնդիրների լուծման գործում։ Բազմանձ խորհրդի առկայությունը հնարավորություն է տալիս ձևավորել բազմակածիք մթնոլորտ, հնարավորություն է տալիս առավել զգոն լինել և մեծացնում է վերահսկողության շրջանակներն ու ազդման շրջանակը։ *<u>Մանկավարժական խորհուրդը</u>* Մանկավարժական խորհուրդը բաղկացած է փորձառու և մասնագիտական բարձր որակավորում ունեցող մանկավարժներով, վերջիններս հետևողական են ինքնակրթությամբ զբաղվելու հարցում, և մշտապես թարմացնում են մասնագիտական բազան։ Մանակավարաժական Խորհրդի կազմում ներգրացած են Ուսումնական հաստատության բոլոր մանակավարժենրը ընդհանուր 24 մանկավարժ։ Ուսումնական հաստատությունում գործունեություն ծավալող 22 մանկավարժ ունեն բարձրագույն մասնագիտական որակավորում իսկ 2-ը միջին մասնագիտական որակավորում։ 2 ուսուցիչ մասնակցել է կամավոր ատեստավորման , ևս 2-ը ցանկություն ունեն մասնակցելու, պարտադիր ատեստավորում անցած 21 ուսուցիչներ։ Ուսումնական հաստատությունում կարևորելով մանկավարաժական խորհրդի մեր դերն ու նվիրումը սաների	լիազորությունները և պարտականությունների շրջանակը։ Մանակավարժական խորհդի անդամներ կան ովքեր չեն ցուցաբերում բարձր մասնակցայնություն, ազատ չեն իրենց կարծքի արտահայտման հարցում։ Խորհուրդների կողմից առկա է ՔՀԿ հանրույթի հետ համագործակցությունների բաց։ Աշակերտական խորհդի կողմից առկա է շահերի պաշտպանությանն ուղղված ակտիվության բացակայություն, նման ակտիվությունը հնարավորություն կտար աշակերտների ձայնը առավել լսելի դարձնել, վերջիններիս կողմից բարձրայնված խնդիրների լուծման մյուս խորհուդները առավել մեծ ոգևորությամբ հետամուտ կլինեին լուծել։ Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնողականության ցածր ցուցանիշ, հանդես չեն գալիս անհատական առաջարկություններով, շատ հաճախ չեն մասնակցում խորհդի նիստերին որտեղ իրավունք ունեն գնտվել։

ուսումնադաստիրակչական գործընթացներում, հաստատության կողմից խրախուսվում է խորհդրի կազմի ազատ և անկաշկանդ կարծիքների փոխանակումը։ Խորհրդի անդամները պարբերաբար իրականցնում են առաջավոր փորձի փոխանակում։ Հաստատության տարեկան աշխատանքային և ուսումնադաստիարակչական պլանը ինչպես նար դասաբաշխումը մինչ վավերացումը քննարկվում հավանության են արժանանում մանկավարժական խորհրդի կողմից ինչի ց հետո ըստ կարգի իրականցվում է վավերացման գործընթացը։ *<u>Աշակերտական խորհուրդը</u>* Աշակերտական խորհրդի ընտրված ներկայացուցիչը խորհրդակցական ձայնի իրավունքով ունի հնարավորություն մասնակցելու կառավարման և մանկավարժական խորհուրդների այն նիստերին , որտեղ քննարկվում են աշակերտների կողմից բարձրաձայնված կամ անմիջապես աշակերտին վերաբերող հարցեր։ Աշակերտական խորհդի ներկայացուցիչները դրսևորում են մեծ հետաքրքրություն հասարակական ակտիվ կյանքը դպրոցական առօրյա բերելու ուղղությամբ։	

Իրականցված վերլուծության արդյունքում վերհանված թույլ կողմերը ունեն մեծ ներուժ հնարավորություն դառնալու, քանի որ խորհուրդ-տնօրեն փոխհամաձայնեցված

աշխատանքը կարող է անդրադառանալ թույլ կողմերի հաղթահարման և կառավարման գործընթացի դյուրինացման համար։

2.4. Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Ուժեղ կողմեր	թույլ կողմեր
Ուսումնական հաստատությունը կրթական, դաստիրակչական գործունեությունն իրականացնում է ի շահ պետության, հանրության և անհատի, տվյալ գործունեության իրականցման գործընթացում կարիք կա իրականցնել համագործակցություններ որոնք ուղղված կլինեն նպատակների լիարժեք կատարմանը։ Դպրոցն ակտիվ և արդյունավեր համագործակցում է՝ ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Շիրակի մարզպետարանի, Արթիկի համայնքապետարանի, Հառիճ վարչական կենտրոնի, Արթիկի ՏՄԱԿ-ի, ՀՄԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, մանկավարժենրին վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների, ՀՀ առողջապահության նախարարության, ԱԻՆ-ի, ՊՆ-ի, իրավապահ մարմինների, ԲՈՒՀ-երի, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, « Հառիճի արվեստի դպրոց» ՊՈԱԿ-ի, Արթիկ համայնքի արվեստի և սպորտ դպրոցների հետ,	• Ծնողական համայնքի նախաձեռնողականության պակաս • ՏԻՄ – ծնոհական համայնք – կրթական այլ կառույցներ – դպրոց թերի համագործակցություն • ՔՀԿ հանրույթի համայնքում քիչ ներկայացվածություն • Դոնոր կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների հետ շարունակական կապի բացակայություն • ՏԻՄ-ի ցածր ներկայացվածություն կառավարման խորհրդում • ՔՀԿ ներկայացուցիչների բացակայություն կառավարման խորհրդում

«Մասնակցային դպրոց» , «Ինտերակտիվ կրթության զարգացում»,«Զևափոխվող կրթություն» հիմնադրամների, բնակավայրի մանկապարտեզի հետ: Առկա է համագործակցություն ՔՀԿ որոշ ներկայացուցիչների հետ, մասնավորապես դպրոցի հետ ունեցել են համագործակցության որոշակի փորձառություն Ավստրիական Զարգացման Գործակալության Lead4shirak ծրագրի ներկայացուցիչների հետ : Ուսումնական հաստատության կողմից խրախուսվում է դպրոց-համայնք, դպրոց-ընտանիք, դպրոց- հասարակություն կապի պահպանումը: Տվյալ կապի ամրացման նպատակով հաճախակի նախաձեռնվում և իրականցվում են տարատեսակ միջոցառումներ,, շաբաթօրյակներ, ծառատունկեր, ճանաչողական էքսկուրսիաներ, բազմաբնույթ հանդիպումներ, որոնք սովորողների մեջ դաստիարակում են համայնքի և հասրակության նկատմամբ հոգատարություն և պատասխանտվության զգացողություն: Նկատելի է ծնողների ներգրավածություն ու մասնակցության բարձր ցուցանիշները դպրոցական ժողովներին և միջոցառումներին: ՏԻՄ-ի կողմից կարևորվելով ՊՈԱԿ-ների հետ համատեղ աշխատանքը, հաճախ տարատեսակ միջոցառումներ է կազմակերպում որտեղ որպես մասնակից ներկայացված է լինում նաև	

Ուսումնական հաստատությունը։ Ուսումնական հաստատությունում ուսանող 5 սաներ մասնակցել են համայնքապետարանի ենթակայությամբ գործող արտադպրոցական խմբակներին, ստացել շնորհալակագրեր։ Կարևոր է նշել դպրոցում ԱՏՁՄ ֆինանսավորամամբ գործող Արմաթ ինժեներական լաբորատորիայի հետ դպրոցի համատեղ համագործակցությունը, վերջինիս շրջանակներում սաները պարբերաբար մասնակցում են հանրապետական մրցույթների և առաջավոր հորիզոնականներ գրավում։ Ուսումնական հաստատության համար մշակված զարգացման ծրագրի արդյունավեր իրականացումն ապահովելու համար նախատեսվում է մշտական համագործակցություն ապահովել ՏԻՄ, ՔՀԿ և այլ հետաքրքրված կառույցների և մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ։ Սա ևս մեկ քայլ կլինի արտաքին կապերի ամրապնդման և զարգացման ծրագրի լիարժեք իրականցման համար։	

2.5. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ուսումնական հաստատությունում դասավադող 24 ուսուցիչներից 22-ը ունեն բարձրագույն կրթություն։	• ՏՀՏ գործիքակազմի հմտությունների ոչ լիարժեք կիարռում, նյութատեխնիկական բազայի թերի լինելու պատճառով։

Բոլորը դասավանդում են համապատասխան առարկաներ՝ ըստ ունեցած որակավորման։ Ուսուցչական կազմում է նաև 1 հոգեբան, 1 ուսուցչի օգնական։ Միջին մասնագիտական որակավորման 2 ուսուցիչներն էլ դիմել են կամավոր ատեստավորման։ Ուսումնական հաստատությունում դասավանդող բոլոր ուսուցիչները սեփական նախաձեռնությամբ և մեծ ոգևորությամբ մասնակցել են ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպած 2-րդ, 5-րդ, 10-րդ դասարաններում ներդրված ՀՊՉ դասընթացներին։ Օգոստոս ամսին պարտադիր ատեստացիա անցել են 6 ուսուցիչներ։ 4 ուսուցիչ դիմել են կամավոր ատեստավորման որոնցից 2 անցել են այն։ Մանկավարժական համակազմը ժամանակ առ ժամանակ մասնակցում է տարատեսակ վերապատրաստումների, սեմինարների, կլոր սեղան քննարկումների, կրթական ֆորումների, մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված այլ միջոցառումների՝ առկա և առցանց ձևաչափով։ Ուսումնական հաստատության ուսուցիչները տիրապետում են ՏՀՏ գործիքակազմի կիրառման համար պահանջվող հմտություններին և ունեն բավական գիտելիքներ վերջիններս դասապրոցեսի ընթացքում կիրառելու համար։	• Առաջավոր փորձի ուսումնասիրության, համայնքի, մարզի և հանրապետության մասշտաբով այլ մասնագետների հետ փորձի փոխանակման պակաս։ • «Տարվա լավագույնները» մրցույթին մասնակցելու ցածր շահագրգռվածություն • Մեթոդական հոդվածների, գիտական աշխատանքների, մշակումների այլ մասնագիտական հոդվածներով կամ նյութերով հանդես գալու ցանկության բացակայություն • Նախագծային աշխատանքների հանդեպ թերահավատ մոտեցում • Մասնագիտական կարողությունների հզորացմանն ուղղված հնարավորություններին թերի տեղեկացվածություն

Հատկապես գովելի է մանկավարժների ոգևորվածությունը կրթական գործընթացներում նորարար մոտեցումների կիրառման տեսանկյունից: Դպրոցում աշխատող ուսուցիչներից ոմանք պատրաստակամ են ընդունել նորարարությունները, ոմանք ուրիշների փորձի վրա հիմնված են քայլեր կատարում իսկ ոմանք նախաձեռնող դերում են և մշտապես պատրաստ են կարծարտիպային մոտեցում ունեցող ուսուցիչներին համոզել: Հաստատությունում ձևավորված մեթոդական միավորումները հավուր պատշաճի արձագանքում են առաջացած խնդիրներին և առաջարկություններով հանդես գալիս, ինչը էական պարզեցնում է խնդիրների լուծման ուղիները:	

2.6. Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը.

Դպրոցն ունի համակարգչային կաբինետ, որը ցավոք հագեցած չէ հզոր տեխնիկայով, առկա է լուրջ բաց համակարգիչների, համացանցի և այլ սարքավորումներ հետ կապված: Սենյակում առկա է 5 համակարգիչ, 1 դյուրակիր համակարգիչ, դպրոցի օգտագործման տակ է գնտվում 2 պրոկտոր: Նշվածից զատ Ուսումնական հաստատություն առկա է ինժեներկաան լաբորատորիա, որտեղ ևս առկա են 7 համակարգիչներ, մոդելավորման 2 տարբեր հաստոցներ: Կրության բնագավառում նորագույն տեխնոլոգիաների ներդրումը հնարավորություն է տալիս խթանել դասավանդման նոր մեթոդների կիրառմանը, ուսուցման նոր ձևերի մշակմանն ու վերջիններիս օգտագործումը հնարավոր է դարձնում կրթական գործընթացներում: Համավարկի պայմաններում, ուսումնական հաստատությունները նոր մարտահրավեր ընդունող դառնալով կարողացան կրթական

գործընացներում լիարժեք կիրառել ՏՀՏ համակարգերը, ինչը համավարկից հետո ունեցավ դրական ազդեցություն գործընթացների կազմակերպման վրա։

Շեշտելով ՏՀՏ համակարգերի կիրառման առավելությունները կարևոր է փաստել որ դպրոցի աշակերտների մեծամասնությունը ուսուցիչների զգալի հատվածից շատ ավելի լավ են տիրապետում ՏՀՏ միջոցներին, քանի որ դասապրոցեսից դուրս ունեն կիրառելիության ավելի լայն հնարավորություններ։

ՏՀՏ համակարգերի կիառումը ուսումնական հաստատությունում հնարավորություն կտա սաների շրջանում բարձրացնել կիբեռանվտանգության ցուցանիշները, չնայած այն հանգամանքին, որ հաստատությունը ՏՀՏ համակարգերի աղքատ պաշար ունի, դպրոցը տարածաշրջանում ունի լավ ցուցանիշներ ԱՏՀՄ-ի կողմից կազմակերպված տարատեսակ միջոացառումների ժամանակ բարձր հորիզոնականների գրավումով, սաները մասնակցել են տերատեսակ մրույթների գրավելով առաջին հորիզոնականներ։

Ուսումնական գործընթացներից զատ մանկավարժական համակազմը ՏՀՏ համակարգեր կիրառում է, ուսումնական նյութերի պատրստման, սաների համար սահիկաշարերի պատրաստման, էլեկտրոնային մատյանների լրացման համար։

Կրթական գործընթացներում նորարարությունների կիրառման տեսանկյունից, մանկավարժական համակազմը պարբերաբար նախագծային կրթությանն է զարկ տալիս, յուրաքանչյուր առարկայի շրջանակներում կազմակերպվում են դասեր, որոնք անցկացվում են համակարգչային սենյակում։

ՏՀՏ կիրառելիության, փորձի փոխանակման, նոր մեթոդների իրականացման համար անհրաժեշտություն կա վերազինելու համակարգչային դասասենյակը, դասարաններում ապահովել համացանցի հասանելիություն, մանկավարժական համակազմի հետ պարբերաբար վերապատրաստումներ իրականցնել։

2.7. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը.

Հանրակրթության պետական չափորոշիչը ձևավորվում է հանրակրթական հիմնական ծրագրերի հետևյալ բաղադրիչներից

1) ուսումնական բնագավառներ, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջներ.

2) շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներ՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ).

3) հենքային ուսումնական պլան և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքներ.

4) սովորողների գնահատման ձևեր, սանդղակ, հաշվառման կարգ։

Ուսումնական հաստատությունը պարտավոր է ապահովել յուրաքանչյուր սովորողի կրթության և դաստիարակության հավասար՝ չխզվող, իրավունքները, հնարավորությունները։

Կարևորելով բոլոր սովորողների ազգային, մշակութային կրթությունը, ինչպես նաև սովորողների՝ չափորոշչային պահանջներին համապատասխան գիտելիքների և հմտությունների զարգացումը, կարողությունների ձևավորումն ու հզորացումը։

Ոգևորիչ է հանգամանքը, որ շրջավարտները շահագրգռված են շարունակել իրենց կրթությունը ոչ միայն միջին մասնագիտական կամ արհեստագործական հաստատություններում այլև Հանրապետությունում առաջավոր ԲՈՒՀ-երում, առավել ոգևորող է արտասահմանում կրթություն ստացող շրջանավարտների առաջընթացին հետևելը։

Նկատելի է սովորողների մասնկացության շահագրգռվածությունը տարածքային և մարզային օլիմպիադաներին։

Առաջավոր փորձի ուսումնասիրությունը, համամետական վերլուծությունները փաստում են, որ կրթության բովանդակության նորացման,վերջիններս առօրյայում կիրառելի դարձնելու նպատակներին հասնելու և դրանց ճանապարհին սահմանված հիմնախնդիրներին ուղղված լուծման գործիքակազմի առաջամարտիկներից մեկը հենց չափորոշչահեն կրթությունն է։

Չափորոշչի պահանջներին համապատասխանելը պարտադիր են հանրակրթական ծրագրերի, առարկայական ծրագրերի, կազմված և կիրառվող ուսումնական պլանների, և առհասարակ կրթական գործընացում ներառված որևէ փաստաթղթի համար։ Վերջիններս մշակվում եմ չափորոշչի նորմերի և դրույթների համաձայն։

Չափորոշչի կիրառումը նպատակ ունիյուրաքանչյուր սովորողի համար հավասար հասանելի կրթական միջավայրի ստեղծման, որակյալ կրթության, ներառական և մասնկացային կրթական քաղաքականության ապահովմանը։

Չափորոշչի կիրառումը հանգեցնում է հաստատությունում սովորողների կարողունակություններ ձևավորմանը։

Ուրախալի է այն հանգամանքը, որ նոր չափորոշիչով առաջնային է ուսումնական հաստատությունների ազատությունը, սա յուրքանչյուր ուսումնական հաստատության հնրավարություն կտա կազմակերպել գործընթացները վերջինները համապատասխանեցնելով սովորողների և դպրոցի կարիքներին:

Կարևորելով նախագծային և գործնական ուսուցման կարևորությունը, ուսունական հաստատությունը համագործակցում է Համայնքում գործող ՀՈԱԿ-ների հետ, հաստատությունում առկա բացերը լրացնելու համար:

Դպրոցում այժմ սովորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 1 աշակերտ: Վերջինիս ուսուցումը կազմակերպվում է տնային ուսուցմամբ, քանի որ դպրոցը հագեցած չէ կրթության կազմակերպման համար անհարժեշտ միջոցներով, սակայն ՈՒսուցիչները համագործակցելով ՏՄԱԿ-ի մասնագիտական թիմի , և սովորողի հետ, կազմակերպում և իրակիանցնում են դասպրոցեսները, ապահովելով սովորողի կրթություն ստանալու հավասար իրավունքը:

Ուսումնական հաստատությունում պահանջվող հարմարեցումների առակայությունը թույլ կտա ԿԱՊԿ ունեցող աշակերտի համար ուսուցումը կազմակերպել հենց դպրոցում, քանի որ դա հնարավորություն կտա սովորողին ինտեգրվել հասարակություն:

Ուսուցիչների կողմից, պարբերաբար իրականցվում է տեղեկատվական բնույթի զրույցներ սսովորողների հետ, որպեսզի նվազագույնին հասցնեն հաստատությունում բուլինգի՝ ուժի, հարկադրանքի, վիրավորական ծաղրի կամ սպառնալիքի կիրառում, վիրավորելու նպատակով, ագրեսիվ գերիշխանության նպատակով:

Չափորոշիչային կրթության ապահովման գործընթացը դանդաղ է ընթանում քանի որ գործընթացքում ուսումնական հաստատությունը ունի հասցեգրված և բացահայտված խնդիրներ՝ թույլ կողմեր, որոնց հաղթահարումը դպրոցի համար կլինի լուրջ ձեռք բերում:

Նյութատեխնիկական բազայի վերազինումը, առարկայական լաբորատորիաների զինումը նախագծային կրթությանն աջակցող միջավայրի ձևավորումն ու կարողունակահեն կրթության կազմակերպման հմտությունների ձևավորումը հնարավորություն կտան առավել արդյունավետ կիրառել չափորոշիչային կրթությունը:

2.8. Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Համեմատական վերլուծություն իրականցնելու արդյունքում միանշանակ կարելի է շեշտել,ոչ վերջին տարիներին ուսումնական հաստատությունը հաստատուն քայլեր է

իրականցրել այնպիսի միջավայրի ձևավորման համար, որտեղ կարևորվում է և սովորողների և վերջիններիս ծնողների և հաստատության այլ շահառուների կարծիքները, մտահոգություններն ու առաջարկությունները, պարբերաբար կազմակերվող նիստերին, հանդիպումներին և քննարկումների ժամանակ փորձում ենք գտնել միասնական արդյունավետ լուծումներ։

Տվյալ միջավայրի ձևավորման համար, չափազանց կարևորում եմ կառավարման խորհդից սկսած մինչև մանկավարժական համակազմի, սովորողների ծնողների, հենց Ուսումնական հաստատությունում սովորողների դերը մասնակցային դասավանդման, սովորողների կրթական կարիքների բացահայտման և բացահայտված կարիքների գնահատման և վերջիններիս բավրարաման, ներառականացման, կազմակերպչկական, կառավարման, տարբեր կառավարման օղակներում որոշումների կայացման, ժողովրդավարական արժեքների ներդրման, դրանց կիրառման և խթանման հարցերում։

Ուսումնական հաստատության համար զարգացման ծրագրի իրականցման առանցքային ուղղություններից մեկը միտված է արդեն իսկ ձևավորված միջավայրի պահպանմանը, առավել նպաստավոր պայմանների ստեղծմանը և այդ միջավայրի շարունակական զարգացմանը։

Դպրոցի գործունեության ընթացքում աստիճանաբար, ժամանակի պահանջներին համահունչ ձևավորվել են մասնակցային կրթության ապահովման մեխանիզմներ, դրական ձեռքբերումներ կան բազմակարծիք և ներառական միջավայրի ստեղծման գործում։

Վերոնշյալը արտացոլվում է խորհրդակցական մարմինների հետ իրականցված քննարկումների իրական ձեռքբերումներով՝ առաջարկություններով և առկա հիմնախնդիրներին արագ և փոքր ռեսուրսների ներգրավմամբ լուծումներով։

Ձևավորված միջավայրի պահպանումը, դրա զարգացումն ու կայացումը հնարավորություն է ընձեռում փոխել Ուսումնական հաստատության իրական շահառուների աշխարհայացքը, վերջիններիս դարձնում են առավել մարդակենտրոն և հանրության շահերին հարող անհատներ, վերջիններս մասնակցելով քննարկումների, հայտնելով իրենց կարծիքը հնարավորություն են ստանում մասնակիցը դառնալ պետության և հանրության համար առանցքային դեր կատարող կրթության որակի բարելավմանը։ Առողջ միջավայրի ստեղծումը ամուր հիմքեր է ստեղծում Դպրոց-ՏԻՄ-ՔՀԿ համագործակցության, ինչպես նաև այլ շահառուների անմիջական մասնակցությամբ որոշումների կայացման համար։

Ուսումնական հաստատությունում արժեքային, մասնկացային և ներառական միջավայրի ձևավորումը նպաստում է սովորողների արագ սոցիալականացմանը, սովորողի համար անձնական շփումների և այլ տեսակի հարաբերություններում կառուցողական երկխոսության հմտությունների զարգացմանը, բանակցային և քննադատական մտածողության ձևավորումը, համագործակցային մթնոլորտի ստեղծմանը:

Միջավայրի ձևավորման գործընթացը բնականաբար հարթ ընթացք չի կարող ունենալ, քանի որ մի կողմից սովորողների մոտ եղած կարծրատիպային մոտեցումը մյուս կողմից շահառու խմբերի, հատկապես՝ սովորողների տեսանելի հատվածի կողմից սեփական կարծիքի արտահայտման կաշկանդվածություն: Միջավայրի լիարժեք ձևավորման համար անհարժեշտ է հաղթահարել վերոնշյալ խոչընդոտը, որպեսզի հնարավորինս մեծացվի ազդեցության շրջանակը:

Առաջնային անհարժշետություն է եմ համարում սահմանել, որ դպրոցում ներառականության բարձր ցուցիչ սահմանելիս պետք է հստակեցնել, որ վերջինս միայն ԿԱՊԿ ունեցող սովորողներին չի վերաբերվում:

Ներառականությունն աքսիոլոգիա է, որը հավասարապես կարող է բնութագրվել և վերագրվել բոլոր խմբերին: Նշվածը չի ենթադրում, որ չի կարևորվում դպրոցում ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթությունը և տարբեր հարթություններում հաստատության պատերից ներս կամ դուրս շփումների կազմակերպումը:

Դպրոցն ունեցած սակավ հնարավորությունների շրջանակներում փորձում է անել առավելագույնը նման կարիք ունեցող սովորողին ներառելու, աջակցելու համար, սակայն սահմանափակ շենքային պայմանները, դեռևս հնարավորություն չեն ընձեռում սովորողին լիարժեք ներգրավել կրթական գործընթացների մեջ, ապահովել վերջինիս սոցիլականացումը: ԿԱՊԿՈՒ սովորողի ուսուցումը կազմակերպվում է նպատակային, հնարավորինս մատչելի խելամիտ հարմարեցումներով: Դպրոցը համագործակցում է ՏՄԱԿ-ի հետ, որի փորձառու մասնագետները տան պայմաններում իրականացնում են աջակցության ծառայություններ, օգնում են կազմակերպել տան պայմաններում հավասար հասանելի կրթության ապահովումը ԿԱՊԿՈՒ սովորողի համար,ժամանակ առ ժամանակ նրանց կողմից կազմակերպվում է հանդիպում-քննարկումներ մանկավարժների հետ ԱՈՒՊ-ների լրացման, ԿԱՊԿՈՒ սովորողի հետ արդյունավետ աշխատանքներ կազմակերպելու համար:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Առկա է սերտ համագործակցություն ՏՄԱԿ աշխատակազմի հետ • Սովորողների մոտ հիմնականում հաղթահարված են մանկավարժահոգեբանական խնդիրները: • Ուսուցիչների կողմից սովորողների մասնակացայնության բարձրացմանն ուղղված միջոցառումների անցկացում • Նոր համագործակցությունների հնարավորությունների բացահայտում ՔՀԿ հանրույթի հետ, սաների սոցիալականացման գործընթացը արագացնելու, վերջիններիս հասարակական աշխատանքների մաս դարձնելու համար • Խորհրդակցական մարմինների շրջանում բազմակարծիք, ներառական և մասնակցային ձևավորված միջավայր • ԲՄԹ -բազմամասնագիտական թիմի առկայություն	• ԿԱՊԿ ունեցող սովորողը լիարժեք ինտեգրված չէ հասարակությանը, ներառական կրթություն ստանում է տնային պայմաններում • ԿԱՊԿ սովորողի համար մինիմալ հարմարությունների բացակայություն • Կարիքի գնահատման գործընթացի արհեստական ձգձգումներ ծնողների կողմից • Հասարակության շրջանում ներռակականության և մասնկացայնության վերաբերյալ տեղեկատվության թերի տիրապետում

Վերոնշյալն միջավայրի ապահովման համար առաջնորդվում ենք ՀՀ Հանրակրթության մասին օրենքով, երեխաների իրավունքներին առնչվող միջազգային կոնվենցիայով և ԿԳՄՍ նախարարի 30. 12. 2022թ. N88 հրամանով.

- Դպրոցում ապահովել ուսուցման և ուսումնական գործընթացի մատչելիությունը, ներառականությունն ու արդյունավետությունը:
- Հետևողականություն ցուցաբերել դպրոցում ուսուցումը համընդհանուր դիզայնի սկզբունքներով կազմակերպելուն:
- Համագործակցային հանդիպումներ կազմակերպել կրթության ոլորտին առնչվող հասարակական կազմակերպությունների հետ:
- Տարածքային աջակցության կենտրոնի հետ մշակել աշխատանքային պլան և ժամանակացույց մանկավարժահոգեբանական աջակցությունների տրամադրման համար:

- Ապահովել ԿԱՊԿ ունեցող սովորողի ԱՈՒՊ-ով սահմանված խելամիտ հարմարեցումների՝ ուսուցման անհատական տեխնիկական միջոցների և գույքի, սարքավորումների, մատչելի ձևաչափով մշակված ուսումնական նյութերի, բանավոր և գրավոր հաղորդակցման այլընտրանքային միջոցների տրամադրումը:

2.9. Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը

Դպրոցի մանկավարժական համակազմի որակի բարելավումը ինքնին ենթադրում է է վերջիններիս կրթական մակարդակի բարձրացում: Նշվածից զատ անհարժեշտություն է առաջանում դաստիարակչական արդյունավետ համակարգերի մշակում իրականացնելու և այն անհատականցնելու: Անհրաժեշտ է՝

- մշակել ռազմավարություն,ոչը կպարունակի գործողությունների համախումբ, որի կիրառումը կհանգեցնի մանկավարժների մասնագիտական որակավորման բարձրացմանը
- խրախուսել մանկավարժների շրջանում ինքնակրթությունը՝ հնարավոր բոլոր տարբերակներով այդ թվում համացանցային ռեսուրսների օգտագործում, դպրոցական միջավայրից դուրս հնարավորությունների բացահայտում և քարտեզագրում (գրադարաններ, լաբեր, վարպետության դասեր), պարտադիր իրականցվող դասընթացներից զատ ոչ ֆորմալ կրթական միջոցառումների մասնակցության խթանում
- Մանակվարաժական ցանցի ստեղծում, որը հնաարվորություն կտա լավագույն փորձի փոխանակման միջոցով հասնել մասնագիտական որակավորման բարձրացման, նոր գիտելիքների և մեթոդների ձեռք բերման
- հնարավորության սահմաններում աջակցել մանկավարժներին զբաղվելու մասնագիտական աշխատանքով հավաքգրել վերջիններիս ուսումնամեթոդական աշխատանքները, մասնագիտական հոդվածներ գրելուն և հրապարակելուն խթանել,
- մոտիվացնել մանկավարժներին դուալ կրթական կոմոնենտի կիրառման, փորձարարական և նորարարությունների կիրառմամբ կրթության իրականցման հարցում :

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Ուսումնական հաստատությունը արժևորում և կարևորում է կրթության և դաստիակչական գործում մանկավարժական համակազմի դերը։ • Ողջունում է նոր մեթոդների կիրառման ցանկացած առաջարկ, հնարավորության սահմանում աջակցում է • Համագործակցում է կազմակերպությունների հետ վերջիններիս վերապատրաստումներ, մասնագիտական որակավորման բարձրացմանն օժանադակելու նպատակով • Խթանվում են տարբեր վերապատրաստումներին, կամավոր ատեստավորմանը, տարակարգ ստանալու մասնակցությանը։	• Դպրոցում թերի է ապահովված անհրաժեշտ պայմանները ուսուցչական համակազմի ինքնակրթության համար, առկա չէ միջավայր հագեցած նյութատեխնիկական բազայով • Դպրոցն ունի սահմանափակ միջոցներ ուսուցիչներին խրախուսելու, պարգևատրումներ իրականցնելու համար • Կամավոր ատեստավորմանը մասնակցելու ցածր հետաքրքրվածության մակարդակ։

2.10. Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից՝ ըստ սահմանված կարգի ։ Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը կազմակերպվում է հստակ ըստ նախատեսված հոդվածների և թափանցիկ՝ տեղակտվությունը հասանելի շահագրգիռ կողմերի համար՝ նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունը տեղադրվում են դպրոցի կայքում:

Ուսումնական հաստատության բյուջեն ունի ծախսային հետևյալ ուղղություններ՝

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
- Կոմունալ վճարներ
- Գրասենյակային և տնտեսական ապրանքներ
- Գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսեր
- Մասնագիտական ծառայություններ
- Կապիտալ ծախսեր

- Կենցաղային և հանրային սննդի ծախսեր
- Պարտադիր ծախ

Կից կարող եք տեսնել ուսումնական հաստատության նախորդ 5 տարիների բյուջեն `

Ուստարի	Բյուջե (հազար ՀՀ դրամ)
2018	33621.6
2019	36927.5
2020	43695.1
2021	44333.7
2022	44317.7

Նախորդ 3 տարիների ֆինանսական բացվածքը ներկայացված է աղյուակում՝

	2020-2021	2021-2022	2022-2023
Բյուջե	43695.1	44333.7	44317.7
Ընդամենը ծախս	43659.1	43944,0	42692,4
Այդ թվում			
1. Աշխատավարձ	40441,1	39276,6	39621,0
2.Ընթացիկ ծախս	3218,0	4667,4	3071,4
3. Գույքի ձեռք բերում	0	0	0

Ֆինանսական հնարավորությունների սղությունը հնարավորություն չի ընձեռում ձեռք բերել Ուսումնական հաստատության համար առաջնային նշանակություն ունեցող տեխնիկա և գյույք, չնայած վերջիններիս անհարժեշտությունը բարձրորակ կրթություն կազմակերպելու հարցում առաջնային է։ Տվյալների ուսումնասիրությունը փաստում է, որ

դպրոցի ունեցած ֆինանսական միջոցների մեծամասնությունը ծախսվում է աշխատավարձերի վճարման նպատակով, աշխատավարձերի վճարումներից հետո եղած տարբերությունը բավարարում է միայն ընթացիկ ծախսերի՝ ինչպիսիք են կոմունալ վճարները, տնտեսական գրասենյակային պարագաները կապիտալ և նպատակային ծախսումները իրականցնելու համար։

Կարիք կա իրականցնել ֆոնդահայթայթման աշխատանքեր դպրոցի նյութատեխնիկական բազար հարստացնելու և կրթական լիարժեք միջավայր ապահովելու համար, հաշվի առնելով հանգամանքը, որ տարածաշրջանում ակտիվ գործունեություն են ծավալում տարբեր միջազգային կազմակերպություններ դպրոցի կառավարման օղակը հետամուտ է լինելու դպրոց այլ միջոցների ներգրավման , և վերջինիս օգնությամբ այն վերազինելու աշխատանքներին։

Ֆինանասական վերլուծությունը փաստում է, որ դպրոցն ունի հետևյալ թույլ կողմերը՝

- Դպրոցի նյութատեխննիկական բազան հագեցնելու համար ֆինանսական միջոցների բացակայություն։
- Դպրոցի ծախսերի հիմնական մասը ուղղված է աշխատավարձերի վճարման ու դրան հավասարեցված վճարներին ինչպես նաև շենքի պահպանման ծախսերին, ընթացիկ այլ ծախսերին ինչիսիք են տնտեսական և գրեսենյակային պարագաների ձեռք բերումը
- ՏՀՏ նոր միջոցների ձեռքբերման համար ֆինանսական միոջցների բացակայություն։

3. Կրթական կարիքների նկարագրությունը և համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին.

3.1. Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում ուսումնական հաստատությունը

Ուսումնական հաստատության գործունեությունը միտված է սովորողներին հասանելի կրթության մատուցման գործընթացի կազմակերպմանը և հիմնվում է սովորողների շրջանու ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ինքնաբավության, ներառականության, թափանցիկության, մասնակցայնության, ազգային և մշակութային սկզբունքների վրա։

Դպրոցի գործունեության**առաքման է**. հանրակրթության հիմնական և լրացուցիչ ծրագրերի իրականացման միջոցով կազմակերպել հաստատությունում սովորողների հասանելի հավասար կրթությունը:

Ուսումնական հաստատության **տեսլականն է**. Ձևավորել միջավայր, որտեղ սովորողը կկայան որպես ինակատարելագործման ձգտող, քննադատական մտածողություն ունեցող,մրցակցային, կրթված , կոնֆլիկտակայուն, բանակցային հմտություններ ունեցող, մասնակցային և համամարդակային սկբունքներ կրող, պատասխանատու անհատներ, որոնք պատրաստ են դիմակայել ապագայի մարտահրավերներին:

Ուսումնական հաստատության գործունեության **նպատակն** է ապահովել յուրաքանչյուր սովորողի (այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ) հնարավորություններին և առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթաց, որը կապահովի առավելագույն մասնակցություն և կապահովի հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքներ, ինչպես նաև կձևավորի անհատներ ովքեր վաղ տարիքից ականջալուր կլինեն համայնքային խնդիրներին և ձեռնամուխ կլինեն դրանց լուծման համար քայլերի իրականցման:

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի նպատակն է ձևավորել ՍՈՎՈՐՈՂ՝

- Համայնքային մտածողություն ունեցող
- հայրենասիրության, պետականության, ազգային ոգով և մշակութային արժեքները գնահատող
- Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական կարողություններ, հաստատուն գիտելիքներ ունեցող
- Փափուկ հմտություններին տիրապետող
- մասնագիտական կողմնորոշում ունեցող, կոնֆլիկտակայուն, բանակցային հմտություններ ունեցող
- ինքնաճանաչման և ինքնակրության արժեքը ընկալող

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը

- Տարրական ընդհանուր կրթություն I աստիճան՝ - լիցենզիա Ա N 0539/52 տեղ/
- Հիմնական ընդհանուր կրթություն II աստիճան՝ - լիցենզիա Ա N 0528/73տեղ/
- Միջնակարգ ընդհանուր կրթություն I II աստիճան - լիցենզիա Ա N 0431/45տեղ/ ·
- Տնային ուսուցում - լիցենզիա Ա N 0431

Ներառական կրթություն

Ուսումնական հաստատությունում ազգային, կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներ չեն սովորում:

Ուսումնական հաստատությունը այս պահին սովորում է մեկ կ րթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, ում հետ աշխատում են հոգեբանը, հատուկ մանկավարժը, ուսուցիչները՝ համագործակցությամբ ծնողների հետ, գործընթացը համակարգվում է ՏՄԱԿ-ի աշախատակիցների կողմից: ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ տարվում են աշխատանքներ՝ համապատասխան իրենց կարիքի աստիճանի, ցավոք Ուսումնական հաստատության շենքային պայմանները բավարար չեն սովորողի կրթական գործընթացը ուս-հաստատության պատերի ներսում կազմակերպու համար:

Ուսումնական հաստատությունում ձևավորված բազմամասնագիտական թիմը աջակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների սոցիալական և հոգեբանական ինտեգրմանը: Այս գործընթացում վերջիններիս աշխատանքը խիստ կարևոր է, քանի որ նրան ճիշտ աշխաատանքի և կարիքի գնահատման գործընթացի արդյունքներից է կախված սովորողի ճիշտ կրթական գործընթացի ինտեգրացիան:

Ուսումնական հաստության մանկավարժական համակազմը նպատակ սահմանելով 2023/2024 թվականներին թիրախավորել երկարօրյա խմբերի ճիշտ կազմակերպման գործընթացները, իրականցնում է կարիքի գնահատում, խմբերի ձևավորման գործընթացում թերացումներ չունենալու նպատակով:

Ուսումնական հաստատությունում նախատեսվող երկարօրյա խմբերի կազմակերպման խնդիրներն են.

- Տնային պայմաններում դասապատրաստման՝ կրթական աջակցության անհնարինության դեպքում Ուսումնական հաստատությունում խմբերի ձևավորում և սովորողների համար հասանելի կրթության ապահովում, խմբերում կարող են ներառվել այլ հաստատությունների սաներ
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում ցածր առաջադիմությամբ սովորողների համար , լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցելը, վերջիններիս հավելյալ կրթական աջակցություն ցուցաբերել

3.2. Պետության կրթական քաղաքականության միտումները, համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները և Ուսումնական հաստատությունը

Ուսումնական հաստատության գործունեությունը կարգավորվում է հանրակրթության ոլորտում ՀՀ օրենսդրությամբ և բնականաբար ցույց է պետության կրթական քաղաքականության իրականացման միտումները, սա իր հերթին միտված է ձևավորելու այնպիսի հասարակության անդամներ, ովքեր պետության շահերի լիիրավ կրողն են, նաձաձեռնողականության, հանդուրժողականության և հասրակական կյանքի ակտիվացմանն ուղղված գործունեություն իրականցնող սերունդ են:

Ուսումնական հաստատության շահերը արտացոլող զարգացման ծրագիրը շարադրելիս , ինչպես նաև հետագայում տվյալ գործողությունների համախումբը իրագործելու փուլում, հետամտու ենք լինելու պետության կողմից սահմանված ոլորտային քաղաքականության բոլոր ուղղությունները, քանի որ ընդհանուր առմամբ բարձրորակ հանրակրթության կազմակերպման ամենամեծ շահագրգիռ կողմը և անմիջական պատվիրատուն պետությունն է:

Փաստաթղթի մշակման գործընթացում հաշվի է առնվել շահագրգիռ բոլոր կողմերի կարծքիները, և սույն զարգացամն ծրագիրը արատցոլում է շարադրյալ խոհուրդների կարծիքն ու սահմանած առաջարկությունները, իրականացվել են հանդիպում-քննարկումներ, դպրոցի մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների ներկայացուցիչների հետ: Անցկացված քննարկումների արդյունքում իրականցվել է կարիքի գնահատում, հաշվի են առնվել յուրաքանչյուր կողմի առաջարկություններն ու դիրքորոշումը:

- ➔ Ուսումնական հաստատությունը սերտ համագործակցում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, հնարավորության սահմաններում ՔՀԿ հանրույթի ներկայացուցիչների հետ, վերջինները տարածաշրջանում ակտիվացման կարիք ունեն:
- ➔ Ուսումնական հաստատություն - ՏԻՄ – պետություն համագործակցության շնորհիվ համայնքում պարբերաբար կազմակերպվում են տարաբնույթ համայնքային միջոցառումներ՝ շաբաթօրյակներ, ծառատունկներ, դպրոցի նախաձեռնողականությամբ կազմակերպվում են հիշատակի օրերին նվիրված միջոացռումներ, որտեղ իրենց ներկայացվածությունը ունեն ՏԻՄ ներկայացուցիչները:

- ➔ Ուսումնական հաստատությունը ժամանակ առ ժամանակ իրականցնում է հաստատությունում սովորողցների կրթական ներուժի, վերջինիս ունակությունների և ստեղծագործական տաղանդի բացահայտում և տվյալ գնահատման արդյունքում իրագործում է միջոացառումներ որոնք միտված են՝
- ❖ Սովորողի բազմակողմանի , մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալ-մշակութային զարգացմանը,
- ❖ Ուսումնական միջավայրում սովորողի առանձգականությանը, միջավայրում համբարվողականության և որպես անհատ ձևավորմանը
- ❖ Ինքնաճանաչման ւ ինքնաբավության նախապատրաստմանը
- ❖ մասնագիտական կողմնորոշմանը ինչպես նաև հետագայում աշխատանքային գործունեության նախաապատրաստումը
- ❖ պատասխանատու, մասնկացային և պահանջատեր քաղաքացու ձևավորմանը:

Ուսումնական հաստատության գործունության նպատակն է պետության, համայնքի, անհատի զարգացմանը նպատակաուղղված որակյալ կրթության ապահովումը, և այդ գործունեության ընթացքում հաստատությունը որդեգրել է հետևյալ սկզբունքները՝

- ➢ ազգային և համամարդկային արժեքների կրող անհատի ձևավորում:
- ➢ Հանրակրթության հավասար հնարավորությունների ապահովում բոլոր սովորողների համար, ինչպես նաև առանձնահատուկ կարիք ունեցող աշակերտների կարիքների համապատասխան:
- ➢ հանրակրթության որակի բարելավում, առաջավոր փորձի ուսումնասիրության ր միջազգային չափանիշներին համապատասխան
- ➢ Հանրակրթության կազմակերպման գործընթացի կազմակերպման ընթացքում խթանել Ուսումնական հաստատությունում սովորողի
    - ՏՀՏ տեխնոլոգիաննեի տիրապետումը և կիրառումը
    - քննադատական մտածողությունը
    - Բանակացային և համագործակցային մտածողությունը
    - ստեղծագործական կարողությունները
    - վերլուծական և տրամաբանական մտածողությունը

3.3 Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի «Հառիճի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ը իրավունք ունի իրականացնելու տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթական ծրագրերին։

Դպրոցի շինությունը չնայած մասնակի բարեկարգման ունի լուրջ շենքային խնդիրներ, ուսումնական դործընթացի կազմակերպման համար առկա են մի շարք բացեր որոնց համալրումը հնարավորություն կտա առավել բարձրորակ, առարկայական կրթությունով ապահովել սովորողներին։

Այսպիսով ուսումնական հաստատությունը չունի հանդիսությունների սրահ, դպրոցում հարամարցեցված է փոքրաձավալ միջոցառումների անցկացման համար։ Հաստատությունում առկա չեն պահակակետ, մաքրուհիների սենյակ, հանդերձարանը հարմարեցված է գիշերային պահակի գիշերակացն ապահովելու համար։

Հաստատությունում չեն գործում առարկայական լաբորատորիաներ, անհրաժեշտ պարագաներ և նյութեր գործնական դասպորցես ապահովելու համար։

Դպրոցի ճաշարանն հարմարեցված է «Դպրոցական տաք սնունդ ծրագրի» պահանջներին, շահագործման ենթակա չէ շինության արհեստանոցը ինչը հնարավորություն չի տալիս խթանել սովորողների մասնագիտական կրթության ստացմանը։

Ուսումնական հաստատությունում չկա բուժկետ և բուժքույրը, ինչը էականորեն նվազեցնում է սովորողների անվտանգության զգացողությունը, առկա գրադարանային բազան թերի է հագեցած, կարիք կա վերազինման։

Նշված թերություններով հանդերձ Ուսումնական հաստատությունը պատվով է կատարում իր վրա դրած պատասխանատվությունը։ Ուսումնական հաստատությունը ունի տնօրենի աշխատասենյակ, 1 ուսուցչանոց,3 վարչական աշխատասենյակ 1 համակարգչային դասասենյակ, 1 լաբորատորիա, 1 ՆԶՊ առարկայի դասասենյակ, 44-օրյա պատերազմում զոհված դպրոցի սաների անուններով անվանակոչված 2 դասասենյակ, բեմ միջանցքում, 1 մարզադահլիճ, որը չափերով չի համապատասխանում սահմանված նորմերին, ունի վերանորոգման և վերազինման կարիք, 2 հանդերձարան/տղաներ և աղջիկներ/ որոնք հարմարեցված են այլ պահանջների բավարարման համար, մասնավորապես հանդերձարաններից մեկը ծառայում է որպես պահակակետ, մյուսը որպես մաքրուհիների սենյակ, չկան առանձնացված լվացարաններ սանհանգույցները շահագործվում են մասնակի, ունեն բարեկարգման կարիք. սպորտհրապարակ առկա չէ, բակը հարամարեցված է դասապրոցեսների իրականցման համար, առկա է «Արմաթ» լաբորատորիա, Ուսումնական հաստատությունում գործում է

գրադարան, ճաշարան , պահեստ, արհեստանոց, կաթսահատուն, դպրոցը ունի համացանցի մասնակի հասանելիություն։

4. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի նպատակները, խնդիրները, ակնկալվող արդյունքները և գործողությունները

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի նպատակները սահմանված են հաստատության հիմնախնդիրներին և զարգացման հնարավորություններին համապատասխան: Փաստաթղթի մշակման գործընթացում իրականացված հետազոտական աշխատանքի և վերլուծությունների արդյունքում սահմանվել են հետևյալ հիմնախնդիրները և մարտահրավերները:

Հաստատության հիմնախնդիրները	
Ոլորտ	Խնդիր
Ուսումնական հաստատության կից տարածքի բարեկարգում մարզադաշտի առանձնացում և կահավորում	• Ուսումնական հաստատության տարածքի ցանկապատի թարմացման կարիք ունի: • Ուսումնական հաստատության բակն ասֆալտապատման կարիք ունի: • Ուսումնական հաստատությունն ունի բակի կանաչապատման կարիք, • Մարզադաշտի պատրաստման և համապատասխան կահավորման կարիք կա : • Ուսումնական հաստատության նկուղային հարկ որպես ապաստարան բարեկարգման և կահավորման կարիք ունի
Նյութատեխնիկական բազայի հարստացում	• Ուսումնական հաստատության տարածքում՝ բակ միջանցքներ տեսախցիկների տեղադրման անհրաժեշտություն: • Համակարգչային դասասենյակի նոր համակարգչային տեխնիկայով և գույքով համալրման կարիք կա: • Էլեկտրոնային գրքերի ներմուծում Ուսումնական հաստատություն, • Էլեկտրոնային գրատախտակներով դասասենյակների հագեցում
Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների հետ սերտ	• Ուսումնական հաստատության շրջանավարտների այլ շահագրգիռ անձանց հետ համատեղ հոգաբարձուների խորհրդի ստեղծում:

համագործակցության խթանում, խորհրդկացկական մարմինների միջև կապի ստեղծում:	• Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համակագործակցության խթանմանն ուղղված քննարկումների կազմակերպում • «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի մասնակցության բացակայություն, ցածտ մոտիվացիա • Կամավոր ատեստավորմանը մասնակցելու ցանկության ոչ բավարար մակարդակ: • Ինքնակրթության միջավայրի ստեծղման անհարաժեշտություն • Աշակերտների կողմից տարածքային, մարզային և հանրապետական օլմպիադաների մասնակցության բացակայություն կամ մասնակցության ցածր ցուցանիշներ : • Ծնողների կոմից սովորողների առաջադիմության հարցում հետևողականության պակաս • Ծնողական և աշակերտական համայնքի կողմից ցածր նախաձեռնողականություն :
Համագործակցությունների ստեղծում հանարակրթության ոլորտի շահագրգիռ կողմերի հետ:	• ՔՀԿ հանրույթի ներկայացուցիների հետ շփման և համագործակցության շրջանակի ընդլայնում: • Սահմանափակ միջոցառումներ բ դպրոց-համայնք համագործակցության շրջանակներում : • Ժամանցային և արտադասրանական, ոչ ֆորման կրթական ծրագրերի իրականցման անհարժեշտություն
Ուսումնական միջավայր	• Սովորողների կողմից ուսումնական հաստատության նախաձեռնությամբ իրականցված միջոցառումների մասնակցության ցածր ցուցանիշ
Դպրոցում մատուցվող կրթական ծառայությունների որակի և սովորողների առաջադիմության բարձրացում	• Սովորողների մոտ առաջդիմության բարձրացում, ուսումնական գործընթացներում ներուժի բացահայտում : • Նվազագույն շեմը չհաղթահարող՝ ցածր առաջադիմությամբ սովորողների համար լրացուցիչ կրթական գործընթացների կազմակերպում վերջիններիս աջակցությունն :

	• Տեղական, մարզային և համապետական օլիմպիադաներին սովորողների մասնակցության տեսակարար կշռի ավելացում :
Տեխնոլոգիաներ և նորարարություն	• ՏՀՏ- ների ներդնում ուսումնական գործընթացներում • Նորարարական մոտեցումների կիրառմամբ մեթոդների մշակում և իրականցնում • Մանակավարժների շրջանում մասնագիտական որակավորման բարձրացման ուղղված գործողությունների համախմբի մշակում • Դպրոցում ուսուցիչ-առաջնորդների համալրում • Մեդիագրագիտության, կիբեռանվտագնության ոլորտներում գիտելիքների շարունկակական թարմացում
Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության ոլորտը կարգավորող օրենքեր, իրավականա նորմատիվներ և ակտեր	• Ուսումնական հաստատության տարբեր օղակներում, խորհրդակցկան մարմիններում, կավառավարման մարմիններում տեղեկատվության տարածում, վերջինների շրջանում իրազակեվածություն բարձրացում առկա օրենքների և կանոնակարգող իրավական ակտերի մասին

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրում առաջդրված է նպատակներին հասնելու համար սահմանվել են խնդիրների և գործողությունների համախումբ, որոնցից յուրաքանչյուրը բխում է ուսումնական հաստատության հիմնախնդիրներից և դրանցից յուրաքանչյուրի լուծումը կհանգեցնի Զարգացման ծրագրի իրականցմանը:

Նպատակի սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ	Ռիսկեր	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Նպատակ 1.	Ա. Բարելաված	Ա. Դպրոցի	Ա. Դպրոցի բյուջեի	Ա. - բյուջեի	2023-2028 թթ

Ուսումնական հաստատությունում շարունակաբար և մշտապես բարելավել կրթական միջավայրը և հանրակրթական գործընթացը կազմակերպել հանրակրթական պետական չափորոշչին համահունչ:	կրթական միջավայր Բ. Արդյունավեր հանրակրթության գործընթաց	նյութաթեխնիկական բազան վերազինվելլ է	սահմանափակումներ Բ. Գործընթացի ռեսուրսատարություն	արդյունավետ պլանավորում - բյուջեի մանրամասն և թափանցիկ քննարկում համապատասխան հաստատության կարիքների	
Խնդրի սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ	Ռիսկեր	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Խնդիր 1.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների (մարզադաշտի) և նյութատեխնիկական բազայի արդիականացում	Ա. Դպրոցի ենթակառուցվածքների բարելավում, շենքքի տեխնիկայով և նյութերով վերազինում	Ա.1. Իրականացվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ Ա.2. Իրականացվել է դպրոցի ենթակառուցվածքի բարելավում Բ.ՋԾՏՀ	Ա. Ընթացիկ վերանորոգման աշխատաների համար դպրոցի բյուջեն չի բավարարում Բ.Սովորողների կողմից միջոցների ոչ բարեխիղճ օգտագործում	բյուջեի արդյունավետ պլանավորում հովանավորների ներգրավում արտաբյուջետային ռեսուրսների ներգրավում Բ. գույքի և սարքավորումների օգտագործման կանոների սահմանում և ներդրում	2023 – 2028 թթ
Գործողության	Ակնկալվող արդյունք	Չափման	Պատասխ	Ռիսկեր	Մեղմացման	Ժամկետ

սահմանում		մեխանիզմ	անատու		մեխանիզմ	
Գործ. 1.1.1 Դպրոցի անհրաժեշտ գույքի ձեռքբերում, նոր ուսուցչական սեղաններ, աշակերտական աթոռներ)	Լրացված են գույքային հրատապ պահանջներ ը	Առկա գույք, հանձման – ընդունման ակտ	Տնօրեն/ Համակարգող	Ֆինանսների անբավարարություն Մեղմացման մեխանիզմ՝ Ֆինանսերի պատշաճ պլանավորում	Ա. Դպրոցի բյուջե Բ. Արտաբյուջետային ռեսուրսների ներգրավում	2023-2028
Գործ. 1.1.2 համակարգիչների ձեռքբերում	Լրացված են գույքային հրատապ պահանջները	Առկա գույք, հանձնման– ընդունման ակտ	Տնօրեն/ համակարգող Տնօրեն/ համակարգող	Ֆինանսների անբավարարություն Մեղմացման մեխանիզմ՝ Ֆինանսերի պատշաճ պլանավորում	Ա. Դպրոցի բյուջե, Բ.Ֆոնդահայթայում Գ. արտաբյուջետային ռեսուրսների ներգրավում	2023-2028
Գործ. 1.1.3 5 դյուրակիր համակարգչի ձեռքբերում	Լրացված են գույքային հրատապ պահանջները		Տնօրեն/ համակարգող	Ֆինանսների անբավարարություն Մեղմացման մեխանիզմ՝ Ֆինանսերի պատշաճ պլանավորում	Դպրոցի բյուջե, Ֆոնդահայթայում	2023-2028
Գործ 1.1.5 Դպրոցի բակի բարեկարգում և մարզադաշտի կայիավորում և կանաչապատում	Դպրոցի բակն ու մարզադաշտը համապատասխանում են և բավարարում են սահմանված սնադարտներին	Աշխատանքների կատարողականի ակտ	Տնօրեն/ համակարգող	Ֆինանսների անբավարարություն Մեղմացման մեխանիզմ՝ Ֆինանսերի պատշաճ պլանավորում	Դպրոցի բյուջե, Ֆոնդահայթայում	2023-2028

Գործ 1.1.6 Գրադարանի արդիականացում, նոր գրականության ձեռքբերում, էլեկտրոնային գրադարանի ստեղծում (ընթերցասրահի կահավորում և համակարգիչներով հագեցում)	Գրադարան ի գույքը և կառավարման մեխանիզմն երը արդիական ացված են	Առկա գույք Ներդրված էլեկտորոնային կառավարման համակարգ	Տնօրեն/ համակարգող	Ֆինանսների անբավարարություն Մեղմացման մեխանիզմ՝ Ֆինանսերի պատշաճ պլանավորում	Դպրոցի բյուջե, Ֆոնդահայթայում	2023-2028
Խնդրի սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ		Ռիսկեր	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Խնդիր 1.2 Ուսումնական հաստատությունում ուսումնական միջավայրի բարելավում, նոր մեթոդների կիրառմամամբ կրթական միջավայրի բարեփոխում	Սոցիլականացման բարձր ցուցանիշ սովորողների մոտ, հասարակական կյանքին ներգրաված, համայնքային միջոցառումներին մասնակից սովորողներ	Ա. Սովորողների կողմից դպրոց հաճախելիություն համամեմատական գործիքների կիրառում Բ.		Բացասական ազդեցություններ և տենդենցներ (թմրանյութերի տարածում, բուլինգ, սոց. կայքերից բացասական տեղեկության տարածում) Ռազմաքաղական և տնտեսական լարված մթնոլորտ Հայաստանում	Կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում, բացասական երևույթների վերաբերյալ տեղեկատվության տարածում, սովորողների մոտ գրագիտության մակարդակի բարձրացում	2023-2028

Գործողության սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ	Պատասխանատու	Ռիսկեր	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Գործ. 1.2.1 Ուսումնական հաստատությունում սովորողների համար կրթադաստիրակչկան ա բարենպաստ միջավայրի ստեղծում	Ներառված մասնակցային աշակերտներ	ԶՈՏՀ	Տնօրեն	Ֆինանսների Անբավարարություն Մեղմացման մեխանիզմներ՝	Ֆինանսերի պատշաճ պլանավորում	2023-2028
Գործ. 1.2.2 Տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար նախատեսված հարմարությունների (թեքատախտակներ) ստեղծում և առկա խոչընդոտների և սահմանափակումներ ի վերացում շենքի ներսում/	Շենքի հասանելիություն Տեղաշարժմ ան սահմանափակումներ ունեցող անձանց համար	ԶՈՏՀ	Տնօրեն	Ֆինանսների Անբավարարություն	Մեղմացման մեխանիզմներ՝ Ֆինանսերի պատշաճ պլանավորում	2023-2028
Խնդրի սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ		Ռիսկեր	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Խնդիր 1.3 Նորարարական,	Նորարական և ստեղծարար	Ա. Կրթական արդյունքներ		Ա. Ֆինանսավորման ծավալները կարող են	Ա. Ֆինանսերի պատշաճ	2023-2028

ինովացիոն ու ստեղծարար տեխնոլոգիաների տեղայնացում	տեխնոլոգիաների կիիրառում կրթական գործընթացներում			մեծ լինել Բ. Դպրոցի անձնակազմը, սովորողներն ու վերջիններիս ծնողները լիարժեք չեն տիրապետում ՏՀՏ համակարգներին	պլանավորում Բ.Պարզ տեղխոլոգիաների և ուղեցույցերի աստիճանական օգտագործում Գ. ԱՆձնակզմի վերապատրաստումներ	
Գործողության սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ	Պատասխանատու	Ռիսկեր	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Գործ. 1.3.1 Նորագույն կրթական տեխնոլոգիաների և մեթոդների տեղայնացում, ուսուցիչների ՏՀՏ կարողությունների հզորացում և Էլեկտրոնային ռեսուրսների հասանելիության ապահովում	Ա.Ուսուցիչներ ը ունակ են կիրառել ՏՀՏ տեխնոլոգի աները կրթական գործընթացներում Բ. Էլետրոնային ռեսուրսների բազա	ԶԾՏՀ	Տնօրեն, տեղակալ, մեթոդական միավորումներ	Ֆինանսավորում չի պահանջվում Անվճար ՏՀՏ գործիքների կիրառում	Ուսուցիչների կողմից ՏՀՏ միջոցների կիրառության ցածր մոտիվացիա։ Մեղմացման մեխանիզմներ՝ Դասապրոցեսում ՏՀՏ միջոցների կիրառության կարևորության շուրջ քննարկումներ։	2023-2028

Նպատակի սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ	Ռիսկեր	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Նպատակ 2. Մասնագիտական կողմնորոշում ունեցող, փափուկ հմտություններ ունեցող շրջանավարտներ։	Աշխատաշուկայում կողմնորոշված և շրջանավարտներ	Աշակերտների և ծնողների շրջանում հարցումներ և քննարկումներ	Սովորողների ցածր հետաքրքրություն Փոփոխվող աշխատանքային շուկայի պահանջներ	Համագործակցություն մասնավոր կառույցների և փորձագետների հետ	2023-2028 թթ
Խնդրի սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ	Ռիսկեր	Ռիսկեր և Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Խնդիր 2.1 Կրթության որակի և սովորողների առաջադիմության, մասնակցայնության և ներառականության բարձրացում	Ա. Քննությունների միջինացված գնահատականների շարունակական աճ Բ. Օլիմպիադաներին մասնակցության բարձր ցուցանիշ	Ա. Ավարտական և այլ քննություններ Բ. Համապետական օլիպիադաների ցուցանիշներ	Աշակերտների հետաքրքրության և մոտիվացյաի պակաս	Ա. Նորարարական մեթոդների ներդրում կրթության մեջ Բ. Օրինակելի աշակերտների և շրջանավարտների պատմությունների	2023-2028
Գործողության սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ / Պատասխանատու	Անհաժեշտ ռեսուրսներ	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Գործ. 2.1.1 Ուսուցման գործընթացի	Հետազոտական բազա	Հետազոտություն խորհրդա / Տնօրեն, տեղակալ,	Ֆինանսավորում չի պահանջվում Անվճար ՏՀՏ	Մոնիթորինգի իրականացման գործընթացում	2023-2028

վերջնարդյունքների ապահովման մոնիթորինգ		կցկական մարմինների, սովորողների և անձնակազմի հետ		գործիքների կիրառում	հմտությունների պակաս Մեղմացման մեխանիզմներ՝ Առաջավոր փորձի ուսումնասիրություն և կիրառում գործընթացում	
Գործողություն 2.2.2 Ոչ ֆորմալ կրթական դասընթացների կազմակերպում, ԲՈՒՀ-դպրոցի կապի ամրապնդում	Այլընտրանքային կրթության ապահովման հնարավորություններ	Արձանագրություններ քաղված դասերի վերաբերյալ ամփոփաթերթիկներ	Տնօրեն, Տեղակալ	Ֆինանսավորում չի պահանջվում, համապատասխան մեթոդական ձեռնարկներ	Կազմակերպված միջոցառումներին սովորողների ոչ բարձր հետաքրքրվածության մակարդակ	2023-2028 Շարունակաբար
Երկաօրյա դասապրոցեսի կազմակերպում, լրացուցիչ կրթական միջոցառումներ իրականցում, սովորողներին այլ աջակցության տրամադրում	Սովորողների առադիմության բարձրացում	Քննարկումներ աշակերտների հետ Զրույցներ դասղեկների հետ	Տնօրեն, տեղակալ, դասղեկ	Ֆինանսավորում չի պահանջվում	Աշակերտների ցածր շահագրգռվածություն։ Մեղմացման մեխանիզմներ՝ համագործակցություն ՔՀԿ-ների հետ, սովորողների համար նոր հնարավորություններ	2023-2028 շարունակաբար կազմակերպվող

					ի տրամադրում	

Նպատակի սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ		Ռիսկեր	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Նպատակ 3. Մասնագիտական բարձր որակավորում ունեցող անձնակազմի վերապատրաստում : Արդյունավետ կառավարմամբ ուսումնական հաստատության զարգացում	Ա. Ուսումնական հաստատության կբարելված կառավարման մեխանիզմներ Բ. Կամավոր ատեստավորում անցած մանակավարժներ	ԶՈՏՀ		Շահակիր կողմերի հետաքրքրության պակաս և ցածր մասնակցություն	ՈՒսումնական հաստատության շահարկիր կողմերի ակտիվ ներգրվում դպրոցի կառավարման գործընթացներում Խրախուսման քաղաքանության կիրառում	2023-2028 թթ
Խնդրի սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ		Ռիսկեր	Ռիսկեր և Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Խնդիր 3.1. Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների հետ համագործակցության ամրապնդում	Բազմակրծության, մասնակցության, այլակարծության ներդրում կառավարման գործընթացներում	Արձանագրություններ		Հետաքրրության պակաս	Շահակիրների շրջանում տեղակտվության տարածում Օրինակելի մասնակցության և ներգրավման խրախուսում	2023-2028 թթ
Գործողության սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզ	Պատասխանատու	Անհաժեշտ ռեսուրսներ	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ

		մ				
Գործ. 3.1.1 Շրջանավարտների մասնակցությամբ հոգաբարձուների խորհրդի ձևավորում	Շրաջանավարտների նրեգրավում դպրոցի կառավարման գործընթացում	Արձանագրություններ	Տնօրեն	Ֆինանսավորում չի պահանջվում	Շրջանավարտների ներգրավածության ցածր ցուցանիշ, Մեղմացման մեխանիզմներ՝ իրականացման ենթակա աշխատանք	2023-2028

Նպատակի սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ	Ռիսկեր	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Նշատակ 3. Ուսումնական հաստատության ներքին կարգավորման իրավական ակտերի շարունակական բարելավում	Ուսումնական հաստատության ներքին կարգավորման իրավական ակտերը համապատասխանում են օրենսդրության պահանջներին և աջակցում են զարգացման ծրագրի արդյունավեր իրականցմանը	Հաստատված իրավական ակտեր	Փոփոխվող օրենսդրական դաշտ	Շարունակաբար հետևել օրենսդրական փոփոխություններին	2023-2028
Խնդրի սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ	Ռիսկեր	Ռիսկեր և Մեղմացման	Ժամկետ

					մեխանիզմ	
Խնդիր 4.1 Ուսումնական հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտերի շուրջ աշխատանքների իրականացում	Ուսումնական հաստատության գործունեության կարգավորման ներքին իրավական ակտերը վերանայված են և համապատասխանում են օրենսդրությանը	Վերանայված իրավական ակտեր ՁՈՏՀ		Փոփոխվող օրենսդրական դաշտ	Լավագույն փորձի ուսումնասիրություն Փորձի փոխանակում այլ ուսումնական հաստատությունների և կառույցների հետ	2023-2028 թթ
Գործողության սահմանում	Ակնկալվող արդյունք	Չափման մեխանիզմ	Պատասխանատու	Անհաժեշտ ռեսուրսներ	Մեղմացման մեխանիզմ	Ժամկետ
Գործ. 3.1.1 Ուսումնական հաստատության մանկավարժական համակազմի ներգրավվածությունը իրավական ակտերի կազմման գործընթացում	Իրավական ակտերի վերանայման մասնակցային գործընթաց	Քննարկումների արձանագրություն	Տնօրեն, տեղակալ	Ֆինանսավորում չի պահանջում	Մանկավարժական համակազմի թերահավատ մոտեցումն իրականացվող աշխատանքներին: Մեղմացման մեխանիզմ՝ Նմանօրինակ գործընթացի կարևորության ներկայացում:	2023-2028 թթ

Գործ. 3.1.2 Անձնակազմի հետ Ուսումնական հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտերի, նորմատիվների գործող օրենսդրական ակտերի ծանոթացում:	Իրավական ակտերի վերանայմ ն մասնակցային գործընթաց	Քննարկումների արձանագրություն	Տնօրեն, տեղակալ	Ֆինասավորում չի պահանջում	Անձնակազմի պասիվ ներգրավածություն Մեղմացման մեխանիզմ՝ Գործընթացի կարևորության շովերաբերյալ քննարկումների կազմակերպում:	2023-2028 թթ

5. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները

Մշակված զարգացամն ծարգրի նպատակներին հասնելու և դրա ճանապահին սահմանված խնդիրների լուծման, գործողությունների պլանավորման և վերջիններիս արդյունքների գնահատման համար արդեն իսկ սահմանվել են ծրագրի գնահատման որոշ չափանիշներ: Նշված չափանիշներից զատ սահմանվել են մի շարք այլ չափանիշներ ևս, որոնք ի լրումն վերոնշյալ հանարվորություն կտան գնահատել արդյունքները: Գնահատման չափաշիշները բնականաբար տարբերվում են միմյանցից և չի կարող սահմանվել մեկ միասնական չափանիշ քանի որ պայմանավոված խնդրից վերջինիս լուծման գորշընթացքում ականկալվող արդյունքները ևս տարբերվում են, հետևաբար գնահատման այլ չափանիշների կիրառման անհարժեշտություն է առաջանում:

Կրթության որակի և սովորողնի առաջադիմության վրա մանկավարժական անձնակազմի և վերջիններիս կիրառած մեթոդների ազդեցության գնահատման չափանիշները պետք է սահմանել ըստ կոնկրետ, չափելի արդյունքների, մասնավորապես որպես չափորոշիչ կարող է հանդես գալ սովորողների առաջադիմությունը և կրթության ոլորոտում ունեցած հաջողությունները: Որպես գնահատման մեխանիզմ նպատակահարմար է սահմանել հետևյալ սանդղկաները՝ 1-ից 4 բալային սանդղակով գնահատում ենք առաջադիմությունը որտեղ 1 նշանակում է անբավարար, 2 բավարար 3 լավ և 4 գերազանց: Նշված սանդղակի կիրառմամվ գնահատականների ձևավորումից հետո սահմանվում են գործակիցներ և ցուցիչներ, որոնք որպես գործիք օգտագործվում են ուսումնական հաստատությունում կրթության որակի և սովորողների առաջադիմության գնահատման համար. սա անուղղակիորեն գործիք է դառնում նաև ուսուցչի աշախատանքի որակավորման համար, նշվածից զատ ներկայիս պրակտիկայում ամենից հաճախ կիրառվող ու արդյունավետության բարձր ցուցանիշ ունեցող եղանակը գրավորների արդյունքների վերլուծությունը: Տվյալ վերլուծություն ժամանակ նախ կարիք կա վերլուծել գրավոր աշխատանքների արդյունքների դինամիկան կատարել համամետական վերլուծություն, ապա համադրման մեթոդով քննությունների արդյունքների ամփոփ վերլուծություն կատարել, համադրման մեթոդով կկարողանանք տեսնել սովորողների բարձր և ցածր գնահատականների հարաբերկացությունը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների գնահատման չափանիշ կարող է հանդիսանալ

- ուսումնական հաստատությունում մանկավարաժական համակազմի կողմից կազմակերպված քննարկում–խորհրդատվությունների քանակը / մասնավորապես մանկավարժ-դաստղեկ/
- Խորհրդակցություններում արաձանգրություններ
- Դասալսումների արձանագրությունների թվային և բովանդակային վերլուծությունը
- Ուսումնական հաստատության սովորողների կողմից միջոցառումներին մասնակցայնությունը
- Ծնողական ժողովների՝ ինչպես դպրոցական այնպես էլ դասարանային մակարակդներում, արձանագրություններ
- Սովորողների բացակայությունների դինամիկայի վերծություն

Կիրառել քառաստիճան գնահատման համակարգ.

- ➔ Ըստ նպատակի և սահմանված խնդիրների կատարվել են ծրագրային բոլոր գործողությունները–4 միավոր
- ➔ Ըստ նպատակի և սահմանված խնդիրների կատարվել են ծրագրային գործողությունների զգալի մասը(65-75%)-3 միավոր
- ➔ Ըստ նպատակի և առաջ քաշված խնդիրների գործողությունները կատարվել են մասամբ–2 միավոր
- ➔ Սահմանված նպատակին իրագործման, առաջադրված խնդիրների լուծման համար քարտեզագրված գործողությունները չեն կատարվել – 1 միավոր

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշները ևս գնահատվում են քառաստիճան սանդղակով՝

- . Դպրոցում առկա է է բազմակարծությամբ, ներառականությամբ, մասնակցայնությանբ ապահովված միջավայր: Շահարգրգիռ ոչ մի կողմ սահմանափակված չէ և անկաշկանդ արտահայտում է սեփական կարծիքը, ազատ են անելու առաջարկություններ և խոսելու անհանգստությունների վերաբերյալ, Ուսումնական հաստատությունում ուսանող բոլոր սաների այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողների համար ապահովված է համապատասխան միջավայրը և միջոցները–4 բալ , գերազանց:
- Կրթության շահառու կողմերը ազատ արտահայտում են իրենց կարծիքը և առաջարկություններ են անում, սակայն առաջարկություններից զատ նախաձեռնողականությամբ և հետևողականությամբ աչքի չեն ընկնում,, ԿԱՊԿՈՒ

սովորողների համար համապատասխան կրթական միջավայրն ապահովված է, բայց ոչ լիարժեք–3 բալ , լավ։

- Սովորողները, շահագրգիռ կողմերը, ծնողները խուսափում են արտահայտել իրենց կարծիքը, որևէ կերպ չեն մասնակցում որոշումների կայացմանը, հետևաբար բազմակարծիք, ժողովրդավարական, մասնակցային, ներառական միջավայրի ձևավորման գործընթացում առկա են խոչընդոտներ –2 բալ, անբավարար։
- Կրթության շահառու կողմերը կրթական ոչ մի գործընթացի չեն մասնակցում, չեն ցուցաբերում նախաձեռնողականություն իսկ ուսումնական հաստատության տնօրենը, համապատասխան պատասխանատուները քայլեր չեն ձեռնարկում բազմակարծիք, ժողովրդավարական, մասնակցային, ներառական միջավայրի անգամ մասնակի ձևավորման համար –1 միավոր, շատ վատ։

Վերոնշյալ միավորները ձևավորվում են և բովանդակային վերլուծության մեթոդով իրականցվում է արդյունքների ուսումնասիրություն։

Դպրոց-համայնք, դպրոց-ծնողական համայնքի,դպրոց-ոլորտի շահագրգիռ գործընկերներ կապերի առկայության, թվարկվածների հեը համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներն են.

- Ուսումնական հաստատությունում սովորողների կարիքներին համապատասխան մշակված է երկարօրյա ուսուցման ծրագիր որը գործում լիարժեք։
- Ուսումնական հաստատությունում սովորողների կարիքներին համապատասխան մշակված է երկարօրյա ուսուցման ծրագիր, որը սակայն լիարժեք չի կիրառվում։
- Երկարօրյա ուսուցման ծրագիր առկա չէ, սակայն առկա են մշակված գործողություններ որոնց կատարումը կհանգեցնի գործուն ծրագրի կազմման։
- Երկարօրյա ուսուցման ծրագիր հաստատությունում առկա չէ, որևէ նախապատասրատական աշխատանքներ չեն իրականցվում վերջինը մշակելու համար։

❖ Ուսումնական հաստատության սովորողները լիարժեքորեն ներառված է համայնքային կյանքին, ծնողական համայնքը ցուցաբերում է բարձր նախաձեռնողականություն և մասնկացայնություն որոշումների կայացման գործընթացներում, դպրոցն ունի համագործակցություններ արադպրոցական խմբակների հետ, դպրոցը ունի է համայնքային կենտրոնի նշանակություն–լավ։

- Ուսումնական հաստատության սովորողները մասնակի ներառված է համայնքային կյանքին, ծնողական համայնքը չի ցուցաբերում է բարձր նախաձեռնողականություն սակայն ապահովում է մասնկացայնություն որոշումների կայացման գործընթացներում, առկա է մասնակի համագործակցային մշակույթ–բավարար:
- Դպրոցը չի մասնակցում ակտիվ համայնքային կյանքին, շահառու խմբերը չեն ցուցաբերում մասնակցայնություն, առկա է կաշկանդվածության մթնոլորտ , առաջարկություններով հանդես չեն գալիս –անբավարար:
- Դպրոցն իրականացնում է համագործակցային նախագծեր գործընկեր դպրոցների, ՔՀԿ ներկայացուցիչների և ՏԻՄ-ի հետ–լավ :
- Դպրոցն իրականացնում է ոչ շարունակական փոքրամասշտաբ համակագործակցային միջոցառումներ –բավարար:
- Դպրոցը չի ցուցաբերում նախաձեռնողականություն և չունի որևէ համատեղ նախագծեր գործընկեր դպրոցների կամ ՔՀԿ և ՏԻՄ ներկայացուցիչների հետ–անբավարար

Բոլոր գնահատականները չափվում են քանակական մեթոդով:

Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշներն են.

- Ուսումնական հաստատությունում տիրում է առողջ միջավայր, չկան հալածանքի նախատիպային դեպքեր, հաստատության կողմից իրականցվում է տեղեկատվության տարածում բուլինգի վերաբերյալ, խորհրդակացական մարմինները համագործակցում են դպրոցի հետ բացառելու համար հալածանքի, օտարման և բռնության որևէ նախադեպի լինելը–լավ:
- Դպրոցում հիմնականում տիրում է առողջ ընկերական մթնոլորտ, սակայն մանակավարժական համակազմի, տնօրինության կամ խորհրդակացկան մարմինների կողմից որևէ կանխարգելիչ միջոցառումներ չեն իրականցվում բացառելու միջանձնային բացասական երանգ ունեցող հարաբերությունները հետևաբար կա ռիսկ որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր կանխարգելել օտարումը, հալածանքը՝ թաքնված կամ բացահայտ, բռնությունն իր տարբեր դրսևորումներով–բավարար:
- Դպրոցում տիրում է անառողջ մթնոլորտ: Օտարումը, հալածանքը, բռնությունն ունեն ակնհայտ դրսևորումներ: Որևէ պատասխանատու մարմնի կողմից զգալի

քայլեր չեն ձեռնարկվում միջավայրի առողջացման բռնության կամ օտարման և հալածանքի դեպքերի բացառման ուղղությամբ–անբավարար:

Գնահատականների հիմքում դրվում են բովանդակային և համեմատական վերլուծությունները:

6. Վերահսկողության մեխանիզմները եւ սահմանված ձևերը

Հայաստանի Հանրապետության «Հանրակրթության մասին» օրենքը նախատեսում է ուսումնական հաստատության գործունեության գնահատման մեխանիզմները:

Ըստ սահմանված մեխնաիզմների ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Ներքին գնահատումը իրենից ենթադրում է հաստատության կողմից իր գործունեության համապարփակ վերլուծությունն: Ըստ սահմանված մեխանիզմը գնահատման գործընթացքում հարկավոր է մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Արտաքին գնահատումը իրենից ենթադրում է համամետական ուսումնասիրություն `ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության գնահատում՝ նմանատիպ մյուս հաստատությունների համեմատ:

Արտաքին գնահատումը որպես կանոն կատարվում է ուսումնական հաստատության գիտությամբ երրորդ անկախ կազմակերպության կողմից:

Ուսումնական հաստատության և՛ ներքին և՛ արտաքին գնահատումն իրականցվում է որպեսզի հնարավոր լինի բարաձրացնել հաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը:

Հանրակրթության ոլորտը վերահսկող և կանոնակարգող օրենսդրության համաձայն ուսումնական հաստատության համար կազմված զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը:

Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ և հաճախ կիրառվող միջոցը 5-ամյա զարգացման ծրագրի հիման վրա դպրոցի կազմած գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականների ուսումնասիրությունն է:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.

- դպրոցի խորհրդի կողմից պարբերական ` առնվազն տարեկան երկու անգամ, դպրոցի տվյալ ուսումնական տարվա կատարողականների, հաշվետվությունների քննարկումը և համապատասխան առաջարկությունների ներկայցում,

- դպրոցի խորհրդի ինչպես նաև խորհրդակցկան մարմինների, մեթոդմիավորումների կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության տրամադրումը,
- ՏԻՄ-ի, համայնքի, ՔՀԿ-ների այլ շահագրգիռ կողմերի կողմից զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին, ինչպես նաև դպրոցական կյանքի ակտիվացմանն ուղղված միջոցառումներին շարունակական ներգրավում ինչու ոչ նման միջոցառումների կազմակերպման նախաձեռնողականության ապահովում
- դպրոցի խորհրդի լիարժեք կազմով մասնակցությունը ուսումնական հաստատության տնօրինության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը,
- զարգացման ծրագրի վավերացում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից,
- Տարեկան աշխատանքային պլանի կազմում սահմանված ժամկետների համաձայն ,
- Տարեվերջին զարգացման ծրագրի վերանայում հիմնված ներքին գնահատման արդյունքերի վրա ,
- Տարեսկզբին վերանայված զարգացման ծրագրի վավեացում հաստատության մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից:

Յուրաքանչյուր տարվա ավարտին անհարժեշտ է ներկայացնել հաստատության զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվություն՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ N 35 Ն հրամանի ձև 2-ի:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Աղյուսակները լրացվում են ըստ Ծրագրի միջոցառումների, գործողությունների, արդյունքների:

Աղյուսակը նախատեսված է ամենամյան հաշվետվության և վերջնական 2028թ -ի հաշվետվության համար

No	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ

Գնահատման չափանիշ	Գնահատականը		
Կատարված է	V		
Մասամբ է կատարված		V	
Կատարված չէ			V